

707

ԳՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

II

003

Գ-89

ԱՐՄՅԱՆ

1940

ՅԵՐԵՎԱՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒԹՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆՔ.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

Г. ГРИГОРЯН

ИСТОРИЯ ПИСЬМА

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1940

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Н Арм.
3-39542

24 MAY 2005

003
9-89

ԳՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ИЧВ. № 14237

ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940



Տպագրվում է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի Նախագահության վորդմամբ:

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԲ

ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի Գրականության և Լեզվի Ինստիտուտը հաշվի առնելով մեր ընթերցող մասսայի աճող պահանջը և այս նյութի կարևորությունը, մասսայական սերիայով հրատարակում է ընկ. Գրիգոր Գրիգորյանի «Գրի պատմությունը» ուղադրության արժանի աշխատությունը: Ընթերցողը լայն հնարավորություն կունենա ծանոթանալու գրի պատմությանը՝ ամենանախնական ետապներից ըսկըսած մինչև մեր օրերը: Հեղինակն ոգտագործել է հրապարակի վրա այս ուղղությամբ յեղած թե հայերեն և թե ռուսերեն աղբյուրները և շարադրել է մատչելի լեզվով: Թեև 1935 թվին Հայպետհրատը զպրոցական սերիայով լույս ընծայեց Մ. Իլինի «Սևով սպիտակի վրա» փոքրիկ աշխատությունը, վորտեղ հեղինակը, ի միջի այլոց, շատ թեթևակի պատմում է «Հիշողության ոգնականներ, նկար—գրություն և խորհրդավոր գրեր»-ի մասին, բայց դա ել շատ քիչ է: Ներկա աշխատությունը պարունակում է ավելի ընդարձակ և հարուստ տեղեկություններ: Աշխատությունն ավելի հետաքրքիր դարձնելու համար հեղինակը տվել է մի շարք իլյուստրատիվ նյութեր, վորոնք ավելի յեն բարձրացնում այս աշխատության ընդհանուր արժեքը: Ինչ վերաբերում է հայ գրերին, հեղինակն առանձին նոր խոսք և նոր գիրքավորում չի տվել, այլ յեղածն ուղղակի շարադրել է: Նա աշխատել է նաև մեթոդաբանական հիմնավորում տալ գրի պատմության այս կամ այն խնդրին և դա նրան հաջողվել է:

ИСТОРИЯ ПИСЬМА

(РЕЗЮМЕ)

Первоначальной формой письма является предметное письмо. Люди вначале передавали свои мысли другим при помощи всевозможных вещей-предметов. Следующей стадией письма является картинное письмо—рисунок, закрепляющий изображение на камне или на глине, на коре или на пергаменте. Образуется идеографическое письмо, где каждый предмет, каждое понятие изображается соответствующим отдельным знаком.

Последней стадией письма является алфавитное-буквенное письмо, когда знак, изображавший вещь, стал также знаком звука, выражавшего ту же вещь.

Изображение алфавитного письма приписывали то семитам, то финикиянам, то другим. Роль и значение финикийян перед человеческой культурой заключается главным образом в том, что они, как торговый народ, полученное в наследство от других письмо для своих торговых целей еще более упрощают, перерабатывают и передают другим народам, с которыми имели торговую связь.

Письмо, от одного народа переходя к другому, подвергается различным видоизменениям, все более и более отодвигается дальше от своей первоначальной формы, впоследствии становясь отдельной, самостоятельной формой письма.

До V века армяне не имели своего алфавита. При ведении государственных дел в Армении пользовались греческой, персидской и ассирийской письменностью, указа-

ния на что мы встречаем в произведениях Моисея Хоренского, Лазаря Парбского и других.

В первой четверти V века (нашей эры) Месроп Маштоц благодаря своей энергичной и усердной научной работе составляет армянский алфавит, с которого и начинается армянская письменная литература.

Г. ГРИГОРЯН

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Այս աշխատութիւնն արդշունք է հետեյալ շնորհակալ գործի.— Պետ. Համալսարանի լեզվաբանութեան դասախոս՝ պրոֆ. Ի. Ղափանցյանը 1937/38 ուս. տարում ֆիլոլոգիական ֆակուլտետի լեզվական բաժնի վերջին կուրսի ուսանողներին, լեզվաբանութիւնից անցնելիք կուրսին զուգընթաց, հանձնարարել եր մշակել մի շարք արժեքավոր թեմաներ՝ «Հարեթաբանութիւնը վորպէս լեզվի նոր ուսմունք», «Հորովների առումները հայերեն լեզվի մեջ», «Անալոգիան լեզվի մեջ», «Գրի վարդապետը» և այլն։ Ահա այդ հանգամանքն առիթ դարձավ ինձ հանձնարարված թեման՝ «Գրի պատմութիւնը» ընդարձակել, խորացնել և հանձնել տպագրութեան։

Պետք է ասել, վոր «Գրի պատմութիւնը» շատ հետաքրքիր է դրա հետ միաժամանակ բավական բարդ թեմա յե, վորի մշակումը պահանջում է յերկար և լուրջ աշխատանք, բազմազան աղբյուրների խոր ուսումնասիրութիւն։

Իմ նպատակը չի յեղել, իհարկե, այս աշխատութեամբ տալ մի ամբողջական, լիակատար գործ, այլ ի նկատի ունենալով նյութի կարևորութիւնը և այն, վոր ներկայումս ասպարեզի վրա այդ ուղղութեամբ հայերեն լեզվով չկա վորևէ մի ուսումնասիրութիւն (յեղածները հին են, միակողմանի, ցրված առանձին-առանձին գրքերում, ամսաթերթերում), վորոշեցի ուժերս ներածին չափ մշակել իմ ձեռքի տակ յեղած աղբյուրները՝ ուսեսերն և հայերեն լեզուներով, մտցնելով անհրաժեշտ ուղղումներ, փոփոխութիւններ և ընթերցող լայն մասսային ներկայացնել մատչելի լեզվով մի աշխատութիւն։

Նյութը դասավորել եմ այսպէս՝ նախ տվել եմ գրի առաջնորդը, վարդապետը և նշանակութիւնը. աշխատել եմ տալ գրի վարդապետը իր նախնական ետապներից սկսած մինչև մեր որերը,

վորի պարզաբանման համար խոսել եմ չինական պատկերագրի՝
յեգիպտական հիերոգլիֆների և ապա սեպագրերի մասին:

Խոսել եմ հայերեն տառերի (գրերի) առաջացման, այդ ուղ-
ղությամբ յեղած կարծիքների մասին, նշելով մեր բանասերների
սոսածները, գլխավորապես ոգտագործելով մեր մատենագիրներին
տված տեղեկությունները:

Աշխատութեանս վերջում սեղմ կերպով շարադրված է տալ-
գրութեան գյուտարարի՝ Յոհան Գուտտենբերգի կյանքը և գոր-
ծունեյությունը, այնուհետև տպագրութեան տարածումը հայերի
մեջ, ոգտագործելով «Տիպ ու տառ»-ի մեջ այդ ուղղութեամբ յե-
ղած տեղեկությունները:

Անշուշտ, վորպէս առաջին փորձ, այս աշխատութեանը գերծ
չե վորոշ թերութեաններից, վորի նկատմամբ ընթերցողները պետք
է ներողամիտ լինեն:

ԳՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

1. ԳՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվից հետո մարդու ձեռք բերած մյուս խոշոր նվաճումը,
հաղորդակցման կարևոր միջոցը, հանդիսանում է գիրը:

Բանավոր լեզվով կարելի չէր ոգտվել միայն անմիջական,
ուղղակի հարաբերութեանների ժամանակ, սակայն հաճախ մար-
դիկ հնարավորութեան չէին ունենում անձամբ իրար հետ տեսնել-
բանավոր լեզվին զուգընթաց խիստ կարիք է զգացվում գտնել
մի այլ միջոց ևս, վորով հնարավոր լիներ արտահայտել իրենց
մաքերը վոչ անմիջականորեն: Այդ նպատակին հասնելու համար
խորն անցյալում մարդիկ դիմում են ամեն տեսակ միջոցների,
բաղմաթիվ փորձեր են անում և, վերջապես, հազարամյակների
ընթացքում կատարած այդ փորձերի, յեռանդուն աշխատանքնե-
րի շնորհիվ նրանց հաջողվում է գտնել այդ միջոցը—գիրը:

Մարդկային հասարակութեան իր զարգացման նախնական
շրջանում ծանոթ չէր գրին:

Հետագայում, արտադրական հարաբերութեանների զարգաց-
ման համեմատաբար բարձր աստիճանի վրա, յերբ մարդկանց
հարաբերութեանները դառնում են հեռոտեռն ավելի ու ավելի
հաճախակի, բարդ ու բաղմազան, յերբ փոխադարձ հասկացողու-
թեան, մաքերի հաղորդման համար հնարավոր չէր բավարարվել
միայն բանավոր լեզվով, մարդիկ ստեղծում են գիրը:

Գրի հայտնաբերումով մարդը կատարեց առաջին խոշոր
քայլը գեպի առաջ, լուծեց իր կենսական, ամենագիտական և լուրջ
խնդիրներից մեկը՝ հարաբերութեան մեջ մտնել միմյանց հետ
անուղղակի կերպով՝ հեռավոր տարածութեանների վրա, գրի առ-
նել իր ամբողջ հոգևոր կյանքը և այսպիսով դարեր շարունակ
պահել այն:

Այնքան մեծ է յեղել գրի նշանակութեանը, վոր մարդիկ

դարեր շարունակ նրա վրա նայել են վորպես «խորհրդավոր» հատկություններով ոժտված մի ուժի:

«Ինչ գրված է գրչով, այն չես կարող կտրել կացնով», «Գրիչը դատարանում նույնն է, ինչ կացինը անտառում», «Գրչով գրածը չես կարող դուրս հանել յեղներով», «Գիրը—դա ձեռքն է, իսկ վորտեղ ձեռքն է—այնտեղ է գրվածն է»: Ահա ժողովրդական մի շարք խորիմաստ առածներ, վորոնք պարզում, բնորոշում են գրի ամբողջ ուժն ու նշանակութունը:

Գրի շնորհիվ է, վոր մենք կարողանում ենք ծանոթանալ մարդկային կյանքի վողջ պատմությանը, հիշում դարերի ընթացքում հավաքված գիտելիքները և այդ բոլորը, վորպես թանգարժեք մի ավանդ, հաղորդում հետագա սերունդներին:

«Գիրը,—ասում է գերմանացի մի գրող,—դա գիտելիքների և իմաստության հրաշալի, անմեկնելի բաժակն է, վորը միշտ լի յե մնում, չնայած ամեն վայրկյան յուրաքանչյուրը վերցնում և նրանից»:

«Գիրը—դա հավերժական կյանքն է հաղթանակող հիշողության և անխուսափելի մահը՝ աններելի մոռացության» (Шнеллер, Всеобщая иллюстрированная история письмен).

Գրի ստեղծման հետ են կապված գիտության մեջ կատարված և կատարվող բոլոր խոշոր նվաճումները, կուլտուրայի խոշորագույն շարժիչներ՝ սղագրի, տպագրության, հեռագրի, էլեկտրի և այլ բազմաթիվ կարևոր գյուտերի հայտնաբերումը:

Յերբ, ինչպես և ում կողմից ստեղծվեց այդ մեծագույն արվեստը—ահա մի շարք հարցեր, վորոնք շարունակ զրադեցրել են գիտնականներին:

Բոլոր հին ժողովուրդները (յեգիպտացիք, բաբելոնացիք, ասորեստանցիք, հրեաները, հույները և մյուսները) հնագույն շրջանում գիրը գիտում էին վորպես խորհրդավոր մի դրոշմութուն և նրա ծագումը վերագրում «ամենակարող» աստվածներին կամ աստվածային ծագում ունեցող և նրանց հետ առնչություն ունեցող առանձին անձնավորությունների: Նրանք յերբեք չեն կարող յենթադրել, վոր այդ արվեստը ձեռք է բերված հասարակ մահկանացուի կողմից:

Յեզիպտացիք իրենց գիրը վերագրում էին լուսնի Տոտ աստծուն, վորը միաժամանակ համարվում էր լեզվի և խոսքի

աստվածը: Հին հույները գրի գյուտը հավասարեցնելով կրակի ոգտագործման և հողի մշակման կարողությանը, Կադմոսին, վորին վերագրում էին այդ գյուտը, դնում էին Պրոմեթեոսի և Տրիպտոլինի կողքին: Հին հրեաները հավատում էին, վոր Մովսեսը իրենց գիրն ստացել է հենց աստծուց: Մեղանում՝ հայերի մեջ, տառերը վերագրում էին աստվածային ներշնչմամբ Մեսրոպին տրված մի պարզ:

Գրի գյուտը վերագրել են մերթ փյունիկեցիներին, մերթ հրեաներին, սեմիտներին և ուրիշներին: Ով էլ վոր լինի գրի գյուտարարը, անկասկած է այն, վոր այդ խոշոր նվաճումը նրան միանգամից չի հաջողվել:

Այն գիրը, վորով այժմ ոգտվում է մարդկությունը, վորի պատկերացումը—յուրացումը մեր յերեխաները ձեռք են բերում այնքան հեշտությամբ, շատ մեծ դժվարություններով և հաջողվել մեր հեռավոր նախնիներին: Մինչև իր այժմյան վիճակին հասնելն այդ գիրն անցել է մի շարք փոխանցիկ աստիճաններ, յենթադրվել է խոշոր փոփոխությունների, վաղուց արդեն կորցրել է իր նախնական տեսքը և վորպես ժառանգություն հասել է մեզ իր ներկա վիճակով:

2. ԳՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Ա. ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՈԳՆԱԿԱՆՆԵՐ

Վորտեղից է սկսվում գրի պատմությունը, վորոնք էին այն նախնական միջոցները, վորոնցով մարդն արտահայտում էր իր մտքերը: Վճրն էր այն ճանապարհը, վորը մարդուն կարող էր հասցնել իր նպատակին:

Միակ ճանապարհը այդ նպատակին հասնելու, միակ սկզբնական միջոցը, վորով մարդը (լեզվից բացի) կարող էր արտահայտել իր մտքերը, դա նրան շրջապատող բնության մեջ գտնվող առարկաներն էին:

Հնագույն շրջանում իրենց մտքերի հաղորդման համար մարդիկ շատ հաճախ ոգտվում էին այդ առարկաներից վորպես հիշողության միջոցներ՝ ոգնականներ:

Այն ժամանակ, յերբ մարդը գտնվում էր մտավոր զարգաց-

ման նախնական աստիճանի վրա, յերբ նրա մտավոր գործունե-
յությունը շատ քիչ էր դիֆերենցիացիայի յենթարկված, յերբ նրա
գիտակցական գործունեյությունը չունէր տրամաբանական գծեր,
հատկություններ, մաքուր պատկերացումներ, յերբ նա քսլոր
պատկերները և գաղափարներն ընդունում էր խորհրդապաշտո-
րեն,— մտքերի, հասկացողությունների հաղորդումն առարկաների
ոգնութեամբ միանգամայն բնական էր և հասկանալի, վորովհետեւ
յուրաքանչյուր առարկա, վորի հետ մարդը հաճախ գործ էր ու-
նենում, անխզելիորեն կապված էր վորոշ հասկացողութեան հետ:

Նախամարդը յուրաքանչյուր գեպքում վոչ միայն ի նկատի
ունէր այս կամ այն առարկայի ունալ պատկերը, այլ և վորոշ
ակնկալութիւններ ունէր նրանից, ակնածութեամբ, յերկյուղով էր
մոտենում այս կամ այն առարկային:

Այսօր էլ շատ հաճախ ոգտվում ենք այդ առարկաներից, վոր-
պես հիշողութեան ոգնականներ: Այդ յերևույթը առանձնապէս
տարածված էր մեզ մոտ՝ հնում, յերբ մարդիկ մեծ մասամբ ան-
գրագետ էին:

Որինակ՝ վորպեսզի չմոռանա իրեն տրված հանձնարարու-
թյունը, մարդը վերցնում է իր հետ մի վորեւե առարկա, վորին
նայելը նրա հիշողութեան մեջ արթնացնում է այդ հանձնարա-
րութեան մասին:

Մատին թեկ կապելը, թաշկինակի ծայրը հանգուցելը և
այլն— բոլորը մարդու համար հանդիսանում էին հիշողութեան
ոգնականներ:

Գերեզմանաթմբերը և գերեզմանների վրա դրված սալաքա-
րերը նախամարդու համար միանգամայն հասկանալի նշաններ ե-
լին, վորոնք հիշեցնում էին նրան այն, ինչ առաջուց հայտնի
էր, կամ այն մասին, ինչի կապակցութեամբ նրան առաջուց բա-
նավոր հայտնված է յեղել:

Ժամանակի ընթացքում հիշողութեան այդ ոգնականներն
ստանում են ինքնուրույն նշանակութուն: Յուրաքանչյուր նշան
ստանում է իր առանձին միտքն ու բովանդակութունը:

Մարդիկ առարկաների միջոցով արտահայտել են վոչ միայն
կոնկրետ, նյութական հասկացողություններ, այլև արտահայտել
են վերացական գաղափարներ: Այդ նպատակի համար նրանք
ընտրում էին այնպիսի առարկաներ, վորոնք ասոցիացիայի կամ

վորոշ հայտնի սովորութեւնների շնորհիվ մտքի մեջ առաջաց-
նում էին մարդկանց հատուկ վորոշ վերացական հասկացողու-
թեւններ:

Որինակ՝ յերբ նախնական ժողովուրդները իրար պատերազմ
էին հայտարարում, թշնամուն ուղարկում էին նիզակ, կացին
աղեղ կամ մի վորեւե այլ գէնք, վորպիսիք գործ էին ածում
կռիւների ժամանակ: Վորոշ ժողովուրդների մոտ կար հետեյալ
սովորութեւնը՝ հաշտութեան պայմանագրերի կնքման ժամանակ
ծխում էին ծխամորճ և ձեռք-ձեռք տալիս այն: Այսպիսով,
ծխամորճը հանդիսավոր լութեան մեջ ձեռքից-ձեռք անցնե-
լով՝ խաղաղութեւն էր նշանակում: Յեւ ահա, շնորհիվ այդ սո-
վորութեան, նրանք ոգտվում էին այդ ծխամորճից, վորպես խա-
ղաղութեան մի նշանի:

Մումատրա կղզու բնակիչները մինչև որս էլ ընկերութեան,
աիրո գաղափարի համար իրար ուղարկում են աղի փոքրիկ կտոր-
ներ, վիրավորանք, ատելութեւն արտահայտելու համար— պղպեղ,
սովորութեւններ, վորոնք մինչև այժմ էլ գոյութեւն ունեն շատ
ժողովուրդների մոտ: Մեզ մոտ ևս աղը և հացը համարվում է սի-
քո, հպատակութեան, հնազանդութեան նշան:

Մարդիկ շատ անգամ իրենց մտքերն ու ցանկութեւնները
արտահայտելու համար ոգտվում էին նաև կենդանիներից: Այս-
պէս, որինակ՝ Հերոդոտը (V դարի հույն պատմաբան, մինչև մեր
թվականը) պատմում է, թե յերբ պարսից Դարեհ արքան պատ-
րաստվում էր արշավել արդի Ռուսաստանի հարավային մասում
այն ժամանակ բնակվող սկյութացիների վրա, պահանջելով հա-
զանդել իրեն, ուղարկել ջուր ու հող, ի նշան հնազանդութեան
ճանաչել իր իշխանութեւնը— սկյութացիք ջրի ու հողի փոխա-
րեն Դարեհին վորպէս պատասխան ուղարկում են թռչուններից,
գորտերից և մի քանի նետերից բաղկացած մի նամակ:

Այդ տարրինակ համակի միտքը հետեյալն էր. «պարսիկ-
ներ, յեթե դուք չեք կարող թռչունների նման թռչել ողում, մկնե-
րի պէս թաքնվել գետնի տակ, գորտերի նման պահվել ջրի մեջ,—
ապա մի փորձեք վոտք դնել մեր յերկիրը, վորովհետեւ կվոչնա-
նաք մեր նետերից»:

Հնում զանազան ժողովուրդների մոտ տարածված էին
հանգուցավոր գրերը: Դրանք հաստ, յերկար թուկեր էին, վո-

բոնց ժապավեններն ձևով կապում եյին տարբեր յերկարության քարակ գունավոր թելեր՝ հանգուցներով:

Յուրաքանչյուր հանգուց, համաձայն իր ձևի և դիրքի՝ պարունակում եր տարբեր միտք կամ բովանդակութուն:

Յեթե այդ հանգուցները և գործվածքները գունավորված չեյին, նրանք ծառայում եյին հաշվի համար:

Պարզ հանգուցները նշանակում եյին տասնյակ, կրկնակին՝ հարյուրյակ, յեռակին՝ հազար և այլն:

Յերբ հանգուցները արտահայտում եյին մտքեր—նրանք գունավորված եյին լինում տարբեր գույներով:

Սև հանգուցը նշանակում եր մահ կամ դժբախտություն, սպիտակը՝ միություն, հաշտություն, կարմիրը՝ պատերազմ, դեղինը՝ վտակի, կանաչը՝ յեգիպտացորեն և այլն:

Հանգուցների նշանակությունը փոխվում եր համաձայն թուկի վրա բռնած նրանց տեղի:


Վորքան հանգուցը մոտ եր գտնվում հաստ թուկին, այնքան նրա ցուցց տված իմաստը լուրջ եր ու կարևոր:

Հանգուցավոր գիրը շատ տարածված եր Աֆրիկայի բազմաթիվ ժողովուրդների մեջ, Հավայան կղզիներում հնագույն շրջանում՝ չինացիների, պարսիկների, մեքսիկացիների և ուրիշների մեջ:

Նույն Հերոդոտը պատմում ե, վոր պարսից Դարեհ արքան սկյութացիների վրա արշավելիս պատվիրում ե հոներին պահպանել Իստեր (Դունայ) գետի կամուրջը: Դրա համար Դարեհը հոներից կազմված զորաբաժնին տալիս ե կաշվից պատրաստած մի պարան՝ 60 հանգուցով և պատվիրում. «Հոներ, վերցրեք այս պարանը և դրա հետ վարվեք այնպես, ինչպես յես կասեմ: Յերբ դուք տեսնեք, վոր յես դուրս յեկա սկյութացիների դեմ, ամեն ուր սկսեցեք բանալ մեկական հանգուց և յերբ կտեսնեք, վոր այդ հանգուցներով նշանակված որերն արդեն լրացել են, —կարող եք քանդել կամուրջը և վերադառնալ ձեր տները»:

Հանգուցային գիրը իր ամենալայն գործածությունը գտավ առանձնապես Ամերիկայի Պերու յերկրամասում, վորի բնակիչները այնքան են կատարելագործում այդ գիրը, վոր ազատ կերպով ոգտվում եյին նրանից ամբողջական, բարդ գեալքերի արտահայտման համար:

Պերուեցիների այդ գրությունը կոչվում եր «կվիպու» (նկ. 1):



Նկ. 1. Պերուեցիների «կվիպու» կոչված հանգուցագիրը

Մտքերի հաղորդման գրության այդ պարզ-հասարակ յեղանակը մի շարք ժողովուրդների մոտ գոյություն ուներ այլ ձևերով:

Հնդկական վորոշ ցեղեր գործ եյին ածում ծովային խեցիներից կամ գուլնգուլն փոքր քարերից պատրաստած ուլունքներ, վորոնք տաշում, հղկում և շարում եյին թելից (նկ. 2):


Խեցիներից հյուսած այս գոտին կոչվում եր «վանպում», վորը դաշինքի կամ հաշտության ժամանակ փոխարինում եր գրավոր փաստաթղթին:

Այստեղ ևս տարբեր գույները տարբեր իմաստ եյին արտահայտում—սևը՝ դժբախտություն, մահ, սպիտակը՝ հաշտություն, խաղաղություն, դեղինը՝ վտակի, կարմիրը՝ պատերազմ, արյուն և այլն:

Այդ գույները դեռ մինչև այժմ ել պահել են իրենց նախնական իմաստը:

Սպիտակ դրոշակը խաղաղություն և արտահայտում, սևը՝ դժբախտություն, կարմիրը՝ ապստամբություն:

Ավստրալիացիների մոտ գործ եյին ածվում կտրուկներով ծածկված ձողիկներ, վորոնք իրենց կտրուկների կապակցության մեջ արտահայտում եյին խոսքի, անհրաժեշտ հաղորդումների պատկերավոր սխեման:



Այդ ձողիկները հիշողության նշաններ եյին և ծառայում էյին հայտարարություններին, հրամաններին և այլ պետքերին համար: Անցյալում հիշողության նման ձևերը շատ տարածված յերկ-վույթ էյին:

Բազմաթիվ ժողովուրդների մոտ դործ էյին անվում առանձին հաշվեփայտեր: Դրանք մի ծայ-րից հղկած փոքր ձողիկներ էյին, վորոնք ծա-ռայում էյին հաշվետարության և միաժամանակ հանդիսանում էյին նյութական միջոց՝ իրավունք-ների հաստատման համար: Զողի հարթ մակերե-վույթի վրա տարբեր ձևի կտրումներով նշանա-կում էյին իրերի, ապրանքների կամ փողերի քանակը: Կտրումներով նշանակված այդ ձողը յեր-կարությամբ միջից կիսում էյին, վորից մեկը վորպես վավերագիր մնում էր պարտապանի, իսկ մյուսը՝ պարտատիրոջ մոտ: Այդ սովորությունը այժմ ևս գոյություն ունի վորոշ ժողովուրդների մեջ. մասնավերապես դա գոյություն ունի գյու-ղերում, վորտեղ գյուղացիները անգրագիտության պատճառով ստիպված են յեղել դիմելու նման միջոցներին:

Զնայած հիշողության ոգնականները՝ հան-գուցավոր գրությունները, կտրումներով ծածկ-ված ձողիկները և այլն, ի վիճակի չէյին արտա-հայտել ամբողջական միտքը (անիրագրել մարդը չէր կարող բացատրել դրանց իմաստը), բայց և այնպես յերկու անձնավորություններին—նամա-

կագիրների միջև ստեղծվում էր, կարծեք թե, գաղտնի համաձայ-նություն՝ ըստ վորի յուրաքանչյուր կտրում պիտի նշանակեր այս կամ այն միտքը, այսպիսով թույլ էր տրվում մորֆերի վո-րոշ հաղորդում՝ շատ սահմանափակ պայմաններում:

Հենց այդ հանգամանքը խոսում է այն մասին, վոր արդեն մարդը այդ շրջանում գործ ուներ գրի հետ—սաղմային վիճակում:

Մտքերի հաղորդման գրության այս սաղմային շրջանը շատ կարևոր է գրի զարգացման պատմության համար, վորով-

հետև այդ ժամանակից սկսած մարդիկ սովորեցին առարկաներին և նրանց տարբեր ձևերին տալ վորոշ նշանակություն և այսպի-սով նախապատրաստեցին իրենց հետագա շրջանի համար, յերբ մտքերի հաղորդման համար նրանք սկսում են գործածել արդեն վոչ թե առարկաները, այլ նրանց պատկերները:

Դա հենց համարվում է գրի պատմության սկիզբը, գրի յեղակումը:

Այսպիսով սկսվում է գրի պատմության հիմնական շրջանը—պատկերագրի շրջանը:

•Բ. ՊԱՏԿԵՐԱԳԻՐ

Մարդու համար չափազանց դժվար էր ամեն ժամանակ ար-տահայտել իր մտքերն առարկաների ոգնությամբ: Նա իր տրա-մադրության տակ հաճախ չէր ունենում այն բոլոր առար-կաները, վորոնցով պիտի արտահայտեր իր մտքերը: Շատ ան-գամ նա ուղղակի հնարավորություն չէր ունենում այդ անե-լու: Որինակ, ինչպես կարող էր նա արտահայտել, թե կովի ժա-մանակ այսքան մարդ է սպանվել: Հենց այդ հանգամանքն ստի-պում է մարդուն նամակ-առարկաներից անցնել նամակ-նկարին—պատկերագրին, վորովհետև ուրիշ ինչը կարող էր առավել դյու-րությամբ մարդու մտքի մեջ մի վորեն առարկայի ճիշտ մտա-պատկերն արտահայտել, յեթե վոչ այդ առարկայի նկարը: Մյուս կողմից նախնական դիրք խոսքի նման ուներ նամանդական բնութի ի և առաջ էր գալիս մարդկանց զեղարկեստական հակում-ներից՝ հաղորդել բոլոր առարկաներն ու յերևույթները նամա-դական պատկերներով:

Մի վորեն իրողության հաղորդումը նկարների միջոցով կոչ-վում է պատկերագիր:

Հայտնի յե, վոր յերեխաները չափազանց հետաքրքրվում են պայծառ, գունավոր նկարներով, նկարազարդ գրքերով: Նրանք չնայած չեն կարողանում կարդալ նկարների տակ գրածները, սակայն նկարին նայելով հեշտությամբ հասկանում են նրա բո-վանդակությունը և իրենց տպավորություններն էլ արտահայ-տում նկարների միջոցով:

Ճիշտ տյնպես, ինչպես մենք մեր վաղ մանկության շրջա-նում հրապուրվում ենք նկարներով և նրանց միջոցով շատ հեշ-տությամբ արտահայտում մեր տպավորությունները, այնպես էլ

մարդկային հասարակութիւնն իր զարգացման վաղ մանկութեան շրջանում ոգտվել է նրանից, արտահայտելով իր գաղափարները:

Պատկերային գրի զարգացման ու կատարելագործման առաջին քայլերը հանդիսացան հիշողութեան համար արված նկարները:

Բանավոր խոսքի նկարագրական շարժումները, վոր տեղի էյին ունենում ոգի մեջ, մտքի առարկաների գծագրումով, ձևա-կերպումով, հետզհետե տեղի յեն տալիս այդ գծագրումների պատկերացմանը ավազի, հողի, ծառի, քարի և այլ մարմինների վրա: Միայն նկարագրական շարժումներից նմանողական պատկերներին անցնելը հենց հանդիսանում է գրի պատմութեան նախապատ-րաստական աստիճանը, պատկերային գրի սկզբնական քայլերը շատ պարզ էյին:

Սկզբում մարդը պատկերների միջոցով իր մտքերն արտա-հայտում էր շատ անորոշ, կտրտված, թերի, առանց տրամաբանա-կան կապի: Նա արտահայտում էր գլխավորապես կոնկրետ առարկաներ:

Հետագայում, յերբ մարդիկ սովորում են նկարների միջոցով տալ և վերացական հասկացողութեաններ, նրանք հնարավորութեան են ստանում իրենց մտքերն ավելի պարզ ու լրիվ արտա-հայտել:

Վերացական մտքեր արտահայտելու համար շրջապատող առարկաներից նկարում էյին այնպիսիները, վորոնց նայելով, մարդու յերեակայութեան մեջ ասոցիացիայի որենքով ծագում էյին վորոշ վերացական հասկացողութեաններ, վորոնք պարու-նակում էյին իրենց մեջ արտահայտած բառերի գաղափարը:

Որինակ՝ ուժի հասկացողութեանը արտահայտելու համար պատկերում էյին առյուծ կամ արծիւ, հպատակութեանը — շան պատկերումով, պատերազմի համար՝ նիզակ կամ վորեւ մի այլ դործիք, վորը գործ էր անում կռիւների ժամանակ:

Բայց մարդկային լեզվի մեջ գոյութեան ունեն վերացական մտքերի մի այնպիսի քանակութեան, վոր վերը նշած միջոցնե-րով չափազանց դժվար էր ընտրել համապատասխան պատկեր-ներ՝ վորոշ և բոլորին հասկանալի խորհրդապաշտական նշա-նակութեամբ:

Որինակ՝ մեզ շրջապատող ինչպիսի առարկաների պատկե-


րումով հնարավոր էր պարզութեամբ և ճշտութեամբ արտահայտել կյանք, մահ, հույս, ուրախութեան, տխրութեան, հաջողութեան, դժբաղդութեան և այլ բազմապիսի վերացական հասկացողութեան-ներ:

Պետք է ասել, վոր մարդը բավական հարպիկ կերպով լու-ծում է և այդ խնդիրը:

Նա դիմում է այլաբանութեան—նկարած պատկերը հասկա-նում է վոչ թե բառացի, այլ փոխաբերական իմաստով:

Մարդիկ դեռևս շատ հին ժամանակներից, յերբ դեռ ապրում էյին քարանձաքներում, իրենց սպանած կենդանիների վոսկոր-ների վրա նկարում էյին զանազան պատկերներ: «Կյանք» հաս-կացողութեանը ամբրիկյան հնդիկները պատկերում էյին յեղջի-րավոր ոձի կերպարանքով, վորովհետե հավատում էյին, վոր ոձն անմահ է (1) (նկ. 3):

«Մահ» հասկացողութեան համար նկարում էյին վորեւ կեն-դանի՝ գլխիվայր (2), հաջողութեան, բախտավորութեան հաս-



Նկ. 3. Ամբրիկյան հնդիկների պատկերադրային խորհրդանշանները

կացութեան համար նկարում էյին կրիա (3), հնդիկը հավատում էր, վոր կրիան իր հետ հաջողութեան, յերջանկութեան և բերում, լարած աղեղը նշանակում էր պատերազմ (5), «ճարպիկ» հասկացութեան համար նկարում էյին մարդուն՝ թևերով (4), փետուրներով զարդարված ծխամորճը հաշտութեան էր նշանակում (6), «ընկերութեան» նշանակում էյին յերկու միացած ձեռքերով (8), ուշադրութեան կամ լսողութեան արտահայտելու համար նկարում էյին մի գլուխ, վորի ականջները գլուխ էյին գալիս վորոր-մորը գծեր (10), սերը պատկերում էյին յերկու միացած սրտերով (9), շրջահայեցողութեանը, զգուշութեանը՝ յերկու խաչաձև ոձերով (11), քամին՝ փքած առագաստի ձևով և այլն:

Յեզիպտացիք «արգարութեան» բառի փոխարեն նկարում էյին ջալամի փետուր, վորովհետև ջալամի բոլոր փետուրները իբր թե հավասար յերկարութեան ունեն:

«Ուժ» բառը արտահայտելու համար նկարում էյին առյուծ, «լուսը»՝ արեգակ, գետի կամ ջրի իմաստն արտահայտելու համար նշանակում էյին յերեք հատ ալիքանման գծեր:

Բոլոր հնագույն ցեղերը սովորութեան ունէյին իրենց կյանքի զանազան պատահարները արտահայտել նկարներով:

Ամերիկայի բնիկները պատկերագիր արձանագրութեան հետաքրքիր ուղինակ և հանդիսանում ստորև բերված 4-րդ նկարը, վորը գտնվել է «Ուրեր» կամ «Վերին» կոչված լճի ափին, մի ժայռի վրա: Այս պատկերագիրն արտահայտում է հնդիկների լճից անցնելու մի գործողութեանը:

Նկարված հինգ մակույկները ցույց են տալիս, վոր այդ ճանապարհորդութեանը կատարվել է հինգ մակույկով. մակույկները մեջ յեղած գծիկները ցույց են տալիս յուրաքանչյուրի մեջ գտնված մարդկանց թիվը:

Ձի հեծած մարդը հավանորեն առաջնորդն է: Առաջին նավակի մեջ և առաջնորդի գաշնակիցը, վոր կոչվում է «Կիշկեմունադի» և վորովհետև դա նման է թռչունի, այդ պատճառով ել նկարված թռչունը պիտի արտահայտի նրա անունը: Յերեք կիսաշրջանները՝ յերեք գնդերով, ցույց են տալիս, վոր այդ ճանապարհորդութեանը տեղ և յերեք որ: Կրիան և արծիվը ցույց են տալիս, վոր արշավանքը հնդիկների քաջութեան շնորհիվ հաջող



Նկ. 4. Ամերիկայի «Վերին» կոչված լճի մոտ գտնված մի պատկերագիր:

և անցել: Կրիան միաժամանակ ցույց է տալիս նրանց ցամաք գլուխ գալը, իսկ առաջնորդի պատկերը ձիով—ցույց է տալիս, վոր այդ ճանապարհորդութեանը տեղի յե ունեցել այն ժամանակ, յերբ այդտեղ արդեն ձիեր էյին ներմուծված: Արծիվն ու յերկու առասպելական կենդանիները՝ գիշերային հովազը և յեղջերավոր ոձը, ներկայացնում են յերկու աստվածներ, վորոնց հովանավորութեան տակ էյին գտնվում ճանապարհորդներն ամբողջ յերթի ընթացքում:

Այս նկարից յերևում է, վոր մի անգամ 51 հնդիկներ իրենց առաջնորդի ղեկավարութեամբ ձեռնարկում են մի արշավանքի, վորը տևում է յերեք որ (յերեք արեգակ) և վորը, շնորհիվ նրանց անսովոր արիութեան (արծիվ) ու աստվածների հովանավորութեան, պսակվում է փայլուն հաջողութեամբ:

Նախնական մարդիկ սովորութեան ունէյին հիշողութեան համար մարդու կողքին պատկերել այն առարկան կամ կենդանին, վորի կոչումը ծառայում էր մարդու համար վորպես անուն:

Տարբեր կենդանիների պատկերումը գործ էրածվում պատկերագրի մեջ նաև տոհմերի և ցեղերի անունների նշանակման համար:

Այսպիսի խորհրդապաշտական պատկերումները հնդկացիների մոտ կոչվում էյին տոտեմներ: Մեր սովորական ականջի

համար տարրերնակ կթվան այնպիսի տոտեմներ, ինչպես՝ կռաւնիկ տոհմ, յեզան ազգ, գայլի սերունդ, կրիական միություն և այլն, բայց հնում նման արտահայտությունների միտքը հիմնալի կերպով հասկանում էին:

Յերկրագնդի համարյա բոլոր ժողովուրդների մոտ, նրանց զարգացման նախնական աստիճանի վրա, չափազանց տարածված էր ֆետիշիզմի գաղափարը—յուրորինակ կրոնական մի տեսություն, վոր իբր թե մահից հետո մարդու հոգին անսպասման փոխանցվում է մի վորեւէ կենդանու մեջ: Յուրաքանչյուր տոհմ, յուրաքանչյուր ժողովուրդ յուր ֆետիշը կամ մարդու հոգու մշտական ապրելավայրն էր համարում մի առանձին կենդանի և վորպես աստվածություն խոնարհվում նրա առաջ:

Պարսիկների մոտ վորպես ֆետիշ համարվում էր աքաղաղը, յեզիպտացիների մոտ նշանավոր Ապիս յեզը, ամերիկյան հնդիկների մոտ՝ կրիան, ագռավը, կոտենկը, յեղջերուն և այլն:

Տոտեմային նման հուշարձաններ հաճախ են հանդիպում գերեզմանային սալքարերի վրա:

5-րդ և 6-րդ նկարները պատկերում են յերկու այդպիսի արձանագրություններ, գտնված Ամերիկայի «Գուրոն» լճի մոտ:

Յեղջերվի պատկերումը այս հուշարձանի վրա ցույց է տալիս, վոր հանդուցյալի տոհմական անունը յեղել և յեղջերու: Կենդանու գլխիվայր լինելը ցույց է տալիս, վոր նա աստվել է: Յեղջերվի ձախ կողմում յեղած 7 գծիկները ցույց են տալիս, վոր նա առաջնորդել է տարբեր արշավանքներում յեղած 7 զորամասերի: Աջ կողմում յեղած իննը գծիկները ցույց են տալիս, վոր նա մասնակցել է իննը ճակատամարտերի: Յեղջերվի տակ յեղած յերեք գծիկները ցույց են տալիս, վոր նա այդ ճակատամարտերում յերեք վերք և ստացել: Իշայծյամի գլուխը ցույց է տալիս նրա ունեցած կատաղի-հուսահատ կռիվը այդ կենդանու հետ:

Արևը, կացինը, լուսնի յերկու պատկերը և ներքևում՝ գերեզմանի մոտ նկարված տոտեմը ցույց են տալիս այն հանգամանքները, վորոնց մեջ մեռել և պարագլուխը: Բոլոր այդ խորհրդանշական պատկերումներից յերևում է, վոր կռիվն է միայն հանդիսացել պարագլխի համար ճակատագրական, վերջ յերևում է կետագծերով գերեզմանին միացած կացնից:

Նա վարել է այդ ճակատամարտը յերկու ամիս (յերկու լու-



Նկ. 5. Գերեզմանաքար՝ գտնված «Գուրոն» կոչված լճի մոտ:

սին) և վերջապես մի որ (արև) սպանվում է թշնամու կողմից (վորի տոտեմը ներքևումն է):

Նույնպիսի միտք է արտահայտում յերկրորդ հուշարձանը (նկ. 5):

Սպանված պարագլուխը ծագում է կոտենկի տոհմից. նա ղեկավարել է յերեք արշավանք, մասնակցել է վեց ճակատամարտի: Վայրի յեղջերուների հետ ունեցած հաջողակ վորսի հետևանքով արժանացել է նշանի: Ծխամորճի և յերեք շրջանակների պատ-



Նկ. 6. Հուշարձան՝ գտնված «Վերին» կոչված լճի մոտ (Ամերիկայում)։

կերումը ցույց է տալիս, վոր նա մասնակցել է հաշտության յերեք պայմանագրերի կնքմանը։ Նկարագրերը բարձր զարգացման է հասնում Մեքսիկայի հնդիկների մեջ։

Այս բոլորից առաջանում է գաղափարագիրը, ուր յուրաքանչյուր առանձին հասկացություն կամ առարկա պատկերվում էր համապատասխան առանձին նշանով, վորի նշանակությունը և միտքը հարկավոր էր գուշակելով իմանալ։

Գրի այդ շրջանը, յերբ մտքերի արտահայտման համար մարդու մոտ կազմվում են պատկերումների մի ամբողջ շարան, հանդիսանում է գրի պատմության սկզբնական շրջանը, վորի զարգացման վերջին աստիճանը հանդիսանում է արդեն հնչյունային գիրը։

Պատկերագրի հետագա զարգացումն ու կատարելագործումը տարբեր ժողովուրդների մոտ տարբեր աստիճանի հասավ։

Չինացիները և Արևելյան Ասիայի մյուս ժողովուրդները ընդմիջող միացին այդ պատկերային գրի վրա և կատարելագործեցին այն, միայն այն հարաբերությամբ, վոր իրենց այդ նկարներն ավելի պարզեցրին, վերածելով այն պարզ նշանների, վորոնց մեջ գեոմետրիկ կարելի է գտնել նախնական նկարների հետ ունեցած հեռավոր նմանությունը։

Այլ ժողովուրդներ՝ հին յեգիպտացիք, բաբելոնացիք, ասորեստանցիք, փյունիկեցիք ավելի հեռու գնացին և սկսեցին նրկարներով արտահայտել վոչ միայն ամբողջական հասկացություններ, այլ և վանկեր ու տառեր։ Դա նրանց խոշորագույն ծառայությունն է հանդիսանում համաշխարհային կուլտուրայի նկատմամբ։

Շնորհիվ լավ ուսումնասիրված գրի յերեք սխառեմների՝ չինական գրի, սեպագրերի և յեգիպտական հիերոգլիֆների, կարելի է պատկերացնել, թե ինչ էր ներկայացնում իրենից պատկերագիրը։

Դժբախտաբար այդ սխառեմներից և վոչ մեկը չի պահել իր նախնական մաքուր ձևը։

Նրանք ժամանակի ընթացքում բավական ձևափոխությունների յեն յենթարկվել։ Դրա պատճառը, անշուշտ, հանդիսացել է այն հանգամանքը, վոր պատկերագիրը, վորպես գրի մի սխառեմ, շատ անկատար, թերի յեր և շատ բան էր թողնում գուշակելու։ Գրի այդ սխառեմը շատ դժվար էր յուրացնել, այդ հանգամանքը արգելակում էր մոտածոցության զարգացմանը, ժողովրդական կրթության և սոցիալական առաջադիմության գործին։ Նա կազմում էր շատ սահմանափակ թվով մարդկանց սեփականությունը։ Այդ հանգամանքը առիթ է տալիս պատկերագրի պարզացմանը, նրա աստիճանական ձևափոխմանը հնչյունային գրի, վորը, իհարկե, տեղի է ունենում յերկար փորձերից, դժվարություններից հետո։

Զինացիները, Արևելյան Ասիայի մյուս ժողովուրդների նման, յերկար փորձերից, փոխանցիկ միջոցներից հետո միայն հասնում են պատկերազրին:

Նրանք ևս իրենց մտքերի հաղորդման համար, նախ՝ ոգավում էյին առարկաներից, ապա անցնում հանգուցադրին, վորի հայտնաբերումը նրանք վերագրում են իրենց ամենահին թագավոր, Սյուի Դին-շիին:

Հանգուցային գիրը չինացիների մոտ յերկար չէ տևում:

Գծազրական գրին անցնելու մի շարք փորձերից հետո չինացիք վերջապես հասնում են պատկերազրին:

Զինական ավանդույթյան համաձայն, հանգուցային գիրը պատկերազրով փոխարինելու միտքը առաջին անգամ պատկանում է վոմն Յանկիի (մեր թվականությունից մոտ 2560 տարի առաջ), վոր մտքերի գրավոր արտահայտման համար ձեռք է բերում մոտ 540 նկար և, այսպիսով, ճանապարհ ցույց տալիս գծազրական գրի հետագա զարգացմանը:

Հետագայում այդ նշանների թիվը բավական շատանում է, հաճախելով տասնյակ հազարների (նկ. 7):

Այդ պատկերազրերից սովորական գործածության համար բավական եր միայն իմանալ չորս-հինգ հազար նշաններ: Յեթն ի նկատի ունենանք ավելի հազվագյուտ պատկերազրերը, վորոնք հանգիստում են գլխավորապես մասնագիտական և հին գրքերում, ապա նրանց թիվը կբարձրանա մինչև 13 հազարի: Զինական գիրը, ինչպես տեսնում ենք, կանգնած է գեռ զարգացման այն աստիճանի վրա, յերբ յուրաքանչյուր բառը նշանակվում եր առանձին պատկերով, առանձին գրային նշանով:

Զինական պատկերազրերը անցել են զարգացման յերկար ճանապարհ և յենթարկվել մի շարք փոփոխությունների, առանձնապես վրձինի և թղթի գործածությունից հետո:

Զինացիք սկզբում իրենց գրային նշանները գծում էյին մախաթով, բամբուկի փոքրիկ տախտակների կամ ամուր տերևների վրա: Հետագայում նրանք սկսում են նկարել տուշով՝ փափուկ, փոքրիկ վրձիններով:

Գրային նյութի փոփոխումով բնականաբար փոխվում է

ㄅ	- 3006	- 20000	ㄆ	- 3007	- 30000	ㄇ	- 3008	- 4000
ㄇ	- 3009	- 4000	ㄏ	- 3010	- 20	ㄏ	- 3011	- 4000
ㄏ	- 3012	- 4000	ㄏ	- 3013	- 300	ㄏ	- 3014	- 400
ㄏ	- 3015	- 400	ㄏ	- 3016	- 4000	ㄏ	- 3017	- 30000
ㄏ	- 3018	- 400	ㄏ	- 3019	- 4000	ㄏ	- 3020	- 4000
ㄏ	- 3021	- 400	ㄏ	- 3022	- 4000	ㄏ	- 3023	- 4000
ㄏ	- 3024	- 400	ㄏ	- 3025	- 4000	ㄏ	- 3026	- 4000
ㄏ	- 3027	- 400	ㄏ	- 3028	- 4000	ㄏ	- 3029	- 4000
ㄏ	- 3030	- 400	ㄏ	- 3031	- 4000	ㄏ	- 3032	- 4000
ㄏ	- 3033	- 400	ㄏ	- 3034	- 4000	ㄏ	- 3035	- 4000
ㄏ	- 3036	- 400	ㄏ	- 3037	- 4000	ㄏ	- 3038	- 4000
ㄏ	- 3039	- 400	ㄏ	- 3040	- 4000	ㄏ	- 3041	- 4000
ㄏ	- 3042	- 400	ㄏ	- 3043	- 4000	ㄏ	- 3044	- 4000
ㄏ	- 3045	- 400	ㄏ	- 3046	- 4000	ㄏ	- 3047	- 4000
ㄏ	- 3048	- 400	ㄏ	- 3049	- 4000	ㄏ	- 3050	- 4000
ㄏ	- 3051	- 400	ㄏ	- 3052	- 4000	ㄏ	- 3053	- 4000
ㄏ	- 3054	- 400	ㄏ	- 3055	- 4000	ㄏ	- 3056	- 4000
ㄏ	- 3057	- 400	ㄏ	- 3058	- 4000	ㄏ	- 3059	- 4000
ㄏ	- 3060	- 400	ㄏ	- 3061	- 4000	ㄏ	- 3062	- 4000
ㄏ	- 3063	- 400	ㄏ	- 3064	- 4000	ㄏ	- 3065	- 4000
ㄏ	- 3066	- 400	ㄏ	- 3067	- 4000	ㄏ	- 3068	- 4000
ㄏ	- 3069	- 400	ㄏ	- 3070	- 4000	ㄏ	- 3071	- 4000
ㄏ	- 3072	- 400	ㄏ	- 3073	- 4000	ㄏ	- 3074	- 4000
ㄏ	- 3075	- 400	ㄏ	- 3076	- 4000	ㄏ	- 3077	- 4000
ㄏ	- 3078	- 400	ㄏ	- 3079	- 4000	ㄏ	- 3080	- 4000
ㄏ	- 3081	- 400	ㄏ	- 3082	- 4000	ㄏ	- 3083	- 4000
ㄏ	- 3084	- 400	ㄏ	- 3085	- 4000	ㄏ	- 3086	- 4000
ㄏ	- 3087	- 400	ㄏ	- 3088	- 4000	ㄏ	- 3089	- 4000
ㄏ	- 3090	- 400	ㄏ	- 3091	- 4000	ㄏ	- 3092	- 4000
ㄏ	- 3093	- 400	ㄏ	- 3094	- 4000	ㄏ	- 3095	- 4000
ㄏ	- 3096	- 400	ㄏ	- 3097	- 4000	ㄏ	- 3098	- 4000
ㄏ	- 3099	- 400	ㄏ	- 3100	- 4000	ㄏ	- 3101	- 4000

Նկ. 7. Զինական պատկերազր—ծանկու գրային նշանները:

գրության բնույթը: Զինացիների պատկերային գիրը յենթարկվում է բավական փոփոխությունների, կրճատումների, պարզացման, այնպես վոր ժամանակակից չինական գրային նշանները այնքան են տարրերվում ծանկու հին նշաններից, վոր նրանց մեջ հազիվ միայն կարելի յի գտնել սկզբնական պատկերազրերի շատ անորոշ հետքերը:

Պատկերազրի մեծ դժվարությունը հանդիսանում եր այն, վոր միևնույն վանկը, միևնույն հնչյունական կոմպլեքսը կարող եր ցույց տալ մի քանի տարբեր հասկացություններ:

Այդ դժվարություններից խուսափելու համար կազմում են լրացուցիչ նշաններ՝ «բանալիներ», վորոնցով ձշտում էյին հնչյունական գաղափարազրի իմաստը:

Այս յեղանակը իր ամենախիստեմատիկ գործածությունը գտավ չինական գրի մեջ:

Յերկար ժամանակ այդ նշանների թիվը անորոշ էր. 1616 թ. վերջնականապես վորոշվեց դրանց թիվը, վոր հասնում էր 214-ի: Ձինարեն նրանք կոչվում են «բուռ», վոր նշանակում է բաժանմունք կամ դաս: Ձինական այբուբենն այժմ, իր ներքին կառուցվածքի տեսակետից, միայն փոքր քանակությամբ նշաններ ունի, վորոնք գործածվում են վորպես գաղափարազերեր — այդ բառի նեղ իմաստով: Դրանք հանդիսանում են այս կամ այն կրեկրեստ առարկաների կամ վերացական հասկացությունների պատկերումները:

Գաղափարազերերի մեծամասնությունը իր կառուցվածքի համաձայն բաժանվում է յերկու խմբի — իմաստական, վոր ցույց է տալիս, թե տվյալ գաղափարազիրը սեմանտիկական վոր խմբին է պատկանում և հնչյունական, վորը հաղորդում է գաղափարազրի մոտավոր արտասանումը, բայց վոչ ժամանակակից, այլ այն շրջանի, յերբ այդ գաղափարազիրը ստեղծված է յեղև:

Ձինական գրային լեզուն խիստ տարբերվում է խոսակցականից: Այսպես կոչված՝ գրական հեղափոխությունը գրային լեզուն նշանակելի չափով մոտեցրեց խոսակցական լեզվին («Բայ-խուռ» — պարզ, հասկանալի լեզու), նպատուեց չինական նոր գրային լեզվի ստեղծմանը: Բայց վորովհետև այդ լեզուն չի արտացոլում իր մեջ բնակչության լայն մասաների լեզվի լրիվ տարբերը, ուստի և դասակարգային հակասությունների սրման կապակցությամբ, բայխուռան առաջացրեց իր դեմ մի շարք առարկուններ՝ թե ձախերի կողմից, վորոնք աշխատում էյին վերացնել նրա թերությունը և լեզուն կառուցել չինական բնակչության ամենալայն մասաների կենդանի խոսակցական լեզվի հիման վրա, և թե ծայրահեղ աջերի կողմից, վորոնք, ընդհակառակը, պահանջում են դարձ դեպի հին գրային լեզուն:

Գաղափարազերի յուրացման մեծ դժվարությունը և չինական գրային լեզվի սուր տարբերությունը խոսակցական լեզվից, հանգում էր նրան, վոր չինական ժողովրդի հիմնական մասան մնում է անգրագետ: Ընդհակառակը, այդ գրի իմացողությունը, վոր կրում էր սուր դասակարգային բնույթ, կազմում է վոչ միայն Ձինաստանի ֆեոդալական-բուրժուական տիրող դասերի, այլև ճապոնիայի, Կորեայի տիրող դասերի մինաշնորհը:

ԽՍՀՄ-ում, ուր գրի պրորբեմը անխզելիորեն կապված է

չինյան-ստալինյան ազգային քաղաքականություն հետ՝ Հեռավոր-Արևելյան շրջանի չինական աշխատավորության համար մշակված և 1931 թվից գործածություն մեջ է մտցված հնչյունական դիրք:

Ձինացիների դիրն անցնում է ճապոնացիներին, վորոնք այդ գրերը գրում են ճապոնական հորինվածքով:

Միայն 735 թվին մեր թվականությունից հետո, ճապոնական մի քուրմ՝ Սիմո-Միցինո-Մարի անունով (ժողովրդի մեջ հայանի՝ Կիրի անունով) կազմում է վանկային դիրը, վոր հայանի յե «Կատա-կանա» անունով: Դա չինական սղազրությունից բաղկացած, 47 նշանից կազմված վանկային մի այբուբեն է:

Յեգիպտական հիերոգլիֆներ

Դրություն այն սխտեմը, վորը պայմանական նշաններով արտահայտում է ամբողջական հասկացություններ, կոչվում է գաղափարազիր կամ հիերոգլիֆ:

Հիերոգլիֆ բառը հունարեն է, բաղկացած է «հիերոս» բառից, վոր նշանակում է սրբազան, և «գլիֆո»՝ գրել, վիմագրել բառից. ամբողջ խոսքը նշանակում է՝ վիմագրված սրբազան նշանազիր:

Գաղափարազերի մայր և պատմական յերկիրը հանդիսանում է Յեգիպտոսը:

Հայտնի յեն գաղափարազերերի մի քանի տեսակները (յեգիպտական դիրը, շումերների բեռագրերը, խեթական հիերոգլիֆները, չինացիների դիրը և այլն): Յեգիպտացիք ևս չինացիների և մյուս ժողովուրդների նման սկսեցին նրանից, վոր իրենց մտքերն արտահայտելու համար պարզապես նկարում էյին այս կամ այն առարկան և յուրաքանչյուր այդպիսի պատկերը համապատասխանում էր վորոշ հասկացության: Հիերոգլիֆների գյուտը ավանդությունը վերագրում է Մենես փարավոնին, վոր ապրում էր 3000 տարի մեր թվականությունից առաջ: Հիերոգլիֆների ամենահին և ամենապարզ ձևն է՝ պատկերազիրը կամ գաղափարազիրը, յերբ խոսքի փոխարեն նկարում են առարկայի պատկերը:

Որինակ՝ արեգակ բառի փոխարեն նկարում էյին շրջան և մեջտեղը դնում մի կետ. աչք բառի տեղ նկարում էյին աչք. յեբեա բառի փոխարեն նկարում էյին յերեխայի պատկերը:

Այս ձևով յեզիպտացիք արտահայտում էին միայն տեսա-
նելի առարկաները: Վերացական մտքեր արտահայտելու համար
նրանք դիմում էին այլաբանություն, այսինքն՝ նկարած պատ-
կերը հասկանում էին վոչ թե բառացի, այլ փոխաբերական մըտ-
քով:

Յեզիպտացիք իրենց մտքերի հաղորդման համար չինա-
ցիներին նման յերկար ժամանակ չեն սահմանափակվում պատկե-
րազրով, վորը շատ թերի միջոց էր, չեր արտահայտում մտքի
բոլոր նրբությունները և առարկաների հատկությունները:

Յերկար ու լուրջ դիտողություններից, ուսումնասիրություն-
ներից հետո նրանք նկատում են, վոր մարդկային խոսքը կազմ-
ված է ձայներից, վոր տարբեր բառերի մեջ կրկնվում է միև-
նույն ձևով և վոր խոսքը կազմող բաղաժաթիլ բառեր իրականում
հանդուս են մի շարք բաղադրիչ մասերի կամ վանկերի:

Յեզիպտացիք մտածում են իրենց պատկերազրվել փոխա-
բերել այնպիսի գրիտով, վորոնց մեջ յուրաքանչյուր վանկը
նշանակվի վորոշ պայմանական նշանով:

Այդ պաաճառով ել նրանք վորոշում են ոգտվել նույն նկար-
ներով, վոր գործ էին անում պատկերազրի ժամանակ, միայն
նրանցից ընտրել այնպիսիները, վորոնք ունենին ավելի թեթև և
պարզ գծագիր: Այդ նկարների թիվը ժամանակին հասնում էր
մոտ 600-ի, յուրաքանչյուր պատկերը այստեղ առաջվա նման
արտահայտում էր վոչ թե ամբողջ հակացություն, այլ տվյալ
բառի առաջին վանկը միայն:

Այսպիսով, յեզիպտացիք պատկերային գրից կամաց-կամաց
անցնում են վանկային գրին, «վանկային այբուբեն»-ին:

Որինակ՝ յեզիպտական լեզվով աչքին առում էին «ար»,
վորի նկարը՝ մի շրջան, մեջտեղը՝ կետ, վոր նշանակում էր
«աչք» և արտահայտում «ար» վանկը ուրիշ բառերի մեջ, ինչպես
այժմ կազմում են ուրբուհներ. որ. «սուրհանդակ» բառը արտա-
հայտելու համար իրար կողքի նկարում են «սուր», «հանդ» և «ակ»:

Վանկային գիրը ևս յեզիպտացիների մոտ յերկար գոյու-
թյուն չի ունենում, վորովհետև շատ բարդ էր, վանկային նշանա-
գրերը՝ բազմաթիվ:

Կուլտուրայի զարդացմանը զուգընթաց՝ յեզիպտացիք հե-
տըզհետե կարիք են զգում ավելի պարզ ու բազմազան գրություն-

ՆԿԱՐ	ԻՍՎԱՍԵ	ՆԿԱՐ	ԻՍՎԱՍԵ	ՆԿԱՐ	ԻՍՎԱՍԵ
	ԲՈՒ		ԿՈԿՈՐԻ ԼՈՍ		ԲԵՐԱԼ
	ԿՂԿԱՆԻ		ՈՋ		ԿՈՒՈՅԲ
	ԿՐԾԻԿ		ՄԱՐԻ		ԲԱՂԿԲ
	ԳԵՏԱԶԻ		ԿՐԵ		ՏՈՒԷ
	ԲՈՐԵՆԻ		ՏՂԿ		ՍԱՐ
	ԿՐՅՈՒՆԸ		ՋԵՌԲ		ՋՈՒՐ
	ՅԵՋ		ԲԱՐ		ԱՐՄԱԿԵՆԻ ՏԵՐԵԿ
	ՆԿՂԿԱ- ՏԿԿ		ՍԱՏ		ՅՈՒԿԻ ՍԿՅԿԿ
			ԿՈՏԲ		ՋՂՈԿ
					ԿՈՂԿ

Նկ. 8. Յեզիպտական նկարագիր.



ների: Այն բառերը, վորոնք չունեյին իրենց հիերոգլիֆները, աշխատում էյին գրել բառախաղերով և ռեբուաներով:

Վերջապես վորոշ հիերոգլիֆներ համապատասխանում են արդեն վոչ թե առանձին վանկերի, այլ միայն մի հնչյունի-տառի, վոր սովորաբար լինում եր բառի առանձին ձայնը, վոր նշանակվում եր այդ հիերոգլիֆով:

	սորս		սաշ		սառ
	բաշ		թաւ		ւորո
	նոյն		սուս		ոգգաւո
	ո		գու		գգոնոնոն
	գրաւ		հաւ		գգոնոնոն
	սոս				սաւ

Նկ. 9. Յեգիպտական այլաբանական նշաններ.

Վանկագրին կամաց-կամաց խառնվում և իսկական այբուբենական գիրը:

Այսպիսով, յեգիպտացիներին հաջողվում և առանց ամբողջապես անցնելու գրության այդ յերկու աստիճաններից՝ պատկերագրից և վանկագրից, հնչյունական այբուբենի հիմքը դնել, վորը և հանդիսանում և նրանց ամենախոշոր ծառայությունը գիտության համար:

Կազմվում և մոտ 600 նշաններից բաղկացած յեգիպտական գրի մի շատ բարդ սխտեմ, վորի մեծ մասը արտահայտում եր ամբողջական բառեր, մի մասը՝ վանկեր, վորոնց թիվը հաշվվում եր 100-ից ավելի, և յերրորդ մասը՝ առանձին ձայներ-հնչյուններ,

վորոնց թիվը յեգիպտացիների մոտ տարբեր շրջաններում փոխվում եր 24-ից մինչև 31: Այդ հնչյունային հիերոգլիֆներով, վորոնք սկզբում, իրենց եյությամբ, բացառապես իսկական բաղաձայն տառեր էյին, առանց վորեւ գծվարության կարելի յեր արտահայտել յուրաքանչյուր բառ, չդիմելով մնացած հարյուրավոր նշանների ոգնությանը:

Վանկագրի գծվարությունները, շփոթությունները վերացնելու համար յեգիպտացիք գործ են ածել նաև առանձին ոժանդակիչ միջոցներ՝ ցուցիչներ կամ ընթերցման վորոշիչներ, վորոնք վոչ մի ձայնական նշանակություն չունեյին, այլ ցույց եյին տալիս միայն, թե ինչպես պիտի կարդալ սովյալ այս կամ այն բառը: Որինակ՝ յեթե վորեւ հիերոգլիֆից հետո նշանակված եր լինում շատություն-բազմություն ցույց տվող մի նկար, ապա դա նշանակում եր, վոր այդ հիերոգլիֆը պիտի կարդալ վորպես ամբողջ վանկ, հակառակ պարագայում՝ վորպես մի տառ:

Այսպիսով, յեգիպտական գիրը ներկայացնում եր պատկերային, վանկային և հնչյունային գրերից համակցված մի բարդ սխտեմ:


Այդ գիրը չունեւ իր վորոշակի ուղղագրությունը և յուրաքանչյուր առանձին դեպքում փոխվում եր՝ համաձայն այս կամ այն պատմական պատճառների:

Ուղղագրության միակ որենքը հանդիսանում եր նշանների ճիշտ և համաչափ դասավորումը՝ ուղղանկյուններով կամ քառակուսիներով:

Հին յեգիպտացիները գրում էյին հորիզոնական տողերով կամ ուղղահայաց սյուներով, վորոնք կարդացվում էյին աջից ձախ կամ վերեից ներքև. սակայն հաճախ գրում էյին և հակառակ ուղղությամբ:

Գրի համար վորպես նյութ յեգիպտացիք գործ էյին ածում քարը, փայտը, խեցին, կաշին, կտավը և պապիրոսը, վորը թարգմանաբար նշանակում և «ձեռքի ընծա», և ամենագործածական գրային նյութն եր հանդիսանում հին Յեգիպտոսում: Հին յեգիպտական հիերոգլիֆային գրի արմատները հասնում են հնագույն մինչ-գինաստյան շրջանը:

Այդ ժամանակաշրջանի բազմաթիվ հիշատակարանների վրա գտնված են մեծ քանակությամբ պատկերային և հնչյունային

ՀԱՅԵՐՈՒՄՆԵՐ	ՄԱՍԿՈՒՄՆԵՐ	ԲԱՆԱՏԵ	ՀԱՅԵՐՈՒՄՆԵՐ	ՄԱՍԿՈՒՄՆԵՐ	ԲԱՆԱՏԵ
	Յ	ԿՐՈՒԿ		Ե	ՇՐՈՎԵ
	Ե	ՅԵՆԵՐԵ ՅԵՆԵԿ		Ե	ՄԱԶԿԿ
	Շ	ՉԵՐԵ		Շ	ՆՈԳ
	Ս	ՍՈՐՅՈՒ		Ս	ԼՅԿ
	Ե	ԿՆԵ		Ե	ՅԵՈՎԵԿՅՈՒՆԵՐ
	Ք	ԿՐԿԵ		Ք	ԿՈՂՈՎ ԿԱՆՈՒ
	Բ	ՆՍՈՐԵԶ		Բ	ԼԵՅՈՒԿ
	Մ	ԲՈՒ		Մ	ՉԱՅ
	Ո	ՋՈՒՐ		Ո	ՈՒՆԵԼԻ
	Ր	ԲԵՐՎԵ		Ր	ԴԱՍԿԿ
	Կ	ԲԱԿ		Կ	ՈՁ
	Կ	ՉՅՈՒՄՆԵ ՅՈՒ		Կ	

Նկ. 10.

նշաններ, վորոնք և հաստատում են արդեն այդ շրջանում գոյութուն ունեցող գրային մի սխառմի—գաղափարագրի գոյության մասին: Առանձնապես հետաքրքիր են նախադինաստյան շրջանի թագավոր՝ Հարմերի աղյուսակի հիերոգլիֆները:

Հին թագավորության հաջորդ դարաշրջանում, կենտրոնական միապետական իշխանության ժամանակ, 6-րդ դինաստիայի գերեզմանների և բուրգերի ներսի պատերի վրա ծածկված արձանագրությունների մեջ բառերի մեծ մասը և հատուկ անունները գրված են մաքուր հնչյունական (վանկային և տառային) նշաններով:

Այդ հնչյունական նշանների կողքին, սակայն, պահպանված են բավական գաղափարագրեր:

Յեզիպտական գիրը իր զարգացման ամենաբարձր ծաղկման և հասնում միջին թագավորության շրջանում, յերբ կազմակերպվում է յեզիպտական աշխարհիկ կլասիկ գրականությունը (2000 թվին նախքան մեր թվականությունը):

Վերջապես, հին յեզիպտական կուլտուրայի անկման շրջանում, յերբ Յեզիպտոսը գտնվում էր ոտարեկրյա նվաճողների՝ Պաղոմեանների իշխանության տակ (IV—I դարը մեր թվականությունից առաջ), յեզիպտական գիրը յենթարկվում է մեծ փոփոխությունների. հին նշաններից շատերը փոխում են իրենց իմաստը, դրա հետ միաժամանակ ստեղծվում են նոր նշաններ:

Այդ եպոխայում հիերոգլիֆները հաճախ գործ են ածվում վորպես զարդանկարներ: Հետագայում հիերոգլիֆային գիրը գիտության համար դառնում է հնացած մի կարողություն:

Յեզիպտական հիերոգլիֆ գրի վերջին մնացորդն են հանդիսանում 7 նշաններ, վորոնք յեզիպտական ժողովրդական գրից անցնում են զպտի կոչված ժողովրդի ալբուրենի մեջ: Միջին դարերում հիերոգլիֆ գրի հասկացողությունն արդեն միանգամայն վերանում է:

Գաղափարագիրը իր բնույթով՝ նշանների բարդությամբ և բազմազանությամբ անմատչելի յեր ժողովրդական լայն մասսաներին: Գրի այդ սխառմը հատուկ էր ստրկատիրական և մասամբ ֆեոդալական հասարակության համար, ծառայում էր միայն ֆեոդալական և մինչ-ֆեոդալական ֆորմացիաների տիրող դասերին, քուրմերի բազմաթիվ կաստային, վորի վրա յեր խոշոր չափով

հիմնված հին Յեզիպոսի պետական վոյշ իշխանությունը, իր կառավարիչներին-չինոֆիլներին հսկա բանակով: Սակայն հենց այդ կառավարողներին, առևտրական շերտերին, իրենց ազդեցությունը լայն մասսաներին վրա տարածելու, արտադրությունը բարձրացնելու համար անհրաժեշտ եր գրության ավելի պարզ, մատչելի մի սխեմա, վորովհետև գաղափարագիրը իր բարդության պատճառով արգելափակում էր նրանց շահերը: Այդ պատճառով ել նրանք աշխատում են գաղափարագիրը փոխարինել գրության մի ավելի պարզ սխեմայով:

Հենց այդ պատճառով ել վանկագրին աստիճանաբար խառնելովում է իսկական ալբուբենական գիրը, վորը սակայն յեզիպոսցիներին մոտ չի դարձանում, այլ ֆնում է իր սաղմային վիճակում:

Ի՞նչ եր դրա պատճառը. ինչո՞ւ յեզիպոսացիք իրենց հնչյունային այդ նշանների կողքին, վորով, ինչպես ասել ենք, նրանք շատ ազատ կերպով, առանց վորևե գովարության, առանց ամենևին դիմելու հիերոգլիֆային մյուս բարդ նշաններին, կարող եյին արտահայտել ամեն տեսակ միտք, այնուամենայնիվ յեզիպոսացիք չեն զարգացնում հնչյունային գիրը, այլ ոգտվում եյին այդ հիերոգլիֆներից:

Այդ հանգամանքը նախ պիտի բացատրել նրանով, վոր քուրմերի դասը, վորի անխախտ սեփականությունն էր կազմում այդ գիրը, չեր ցանկանում, վոր դա մասսայականանա-ժողովրդականանա, վորպեսզի ժողովրդական լայն մասսաներին պահեն շարունակ խավարի, ստրկության մեջ և ավելի հեշտ միջոցներով շահագործեն նրան. և յերկրորդ՝ գաղափարագիրը հանդիսանում էր մտքերի արագ և կրճատ գրելու համար հարմար միջոց:

Հիերոգլիֆներին բոլոր գաղտնիքներն իմացողների համար ավելի նպատակահարմար և հեշտ եր վորոշ բառեր նշանակել մի նշանով կամ ամբողջական վանկերով, քան գրել այն առանձին-առանձին տառերով: Հիերոգլիֆները, վորոնք նշանակում եյին ամբողջական բառեր կամ վանկեր, համարյա նույն արժեքը ունեյին, ինչ ժամանակակից սղագրության նշանները: Հիերոգլիֆային գրի բարդությունը, գովարություններն ու խառնաշփոթությունը արտացոլել է նույնիսկ սովորական խոսակցական լեզվի մեջ: Յերբ մեկը գրում է շատ բարդ, խառը, անհասկանալի դարձվածքներով—ասում են՝ հիերոգլիֆներ և գրել:

Չնայած իր ունեցած բոլոր գովարություններին, հիերոգլիֆային սխեման յեզիպոսացիներին մեծ ծառայություն է մատուցել: Հիերոգլիֆներին շնորհիվ յեզիպոսացիք սովորում եյին բառերը բաժանել—անդամահատել բաղկացուցիչ-եղանակաբան մասերի, վորի շնորհիվ նրանք հետագայում հնարավորություն են ստանում իրենց գրավոր ձևերով-պատկերներով արտահայտել արդեն վոչ թե ամբողջական հասկացողություններ, վոչ թե ամբողջ վանկեր, այլ միայն մարդկային խոսքի առանձին ձայները և, հետևաբար, բավականանալ առանց վորևե ոժանդակիչ միջոցների: Յեզիպոսացիք, վանկային գիրը ժամանակին իր տեղը վերջնականապես դիջում է հնչյունային գրին, վորի մեջ յուրաքանչյուր նկար պատկերում է միայն այն ձայնը, այն տառը, վորով սկսվում է նկարված առարկայի անունը:

Հիերոգլիֆներին խորհրդավոր եյությունը բացահայտելու փառքն ու պատիվը պատկանում է Փրանսիացի տաղանդավոր գիտնական-ֆիլոլոգ Ժան Ֆրանսուա Շամպոլլիոնին, վորը ճիշտ կերպով վորոշեց յեզիպոսական գրի բարդ սկզբունքները: Նա յե հանդիսանում յեզիպոսարանության ստեղծողը: Նա գրել է նմանապես և յեզիպոսական լեզվի առաջին քերականությունը, վորը մինչև այժմ ել չի կորցրել իր նշանակությունը:

1799 թվին, յերբ Նապոլեոն Բոնապարտի առաջնորդությամբ Փրանսիական զորքն իջնում է յեզիպոսական տերիտորիան, Ռոզետտա քաղաքի մոտ (Յեզիպոսի հյուսիսային ծայրամասում) խրամատներ փորելիս գտնում են քարե մի հսկա սալ՝ հունարեն և յեզիպոսերեն արձանագրություններով:


Այդ հանգամանքը չափազանց ուրախացնում է բոլոր գիտնականներին, վորոնք կարծում եյին, թե դա պատկերագիր է, վորի յուրաքանչյուր բառը նշանակված պիտի լինի առանձին նկարով և, հետևապես, բավական է համեմատել հունական և յեզիպոսական գրերը, վորպեսզի նրանց առաջ բացվի նշանագրերի ամբողջ գաղտնիքը: Սակայն նրանք խորապես հիասթափվում են, յերբ համեմատելով յերկու արձանագրությունների բառերը և գրերը, վոչ մի դրական հետևանքի չեն հասնում:

Շամպոլլիոնը հիերոգլիֆները բացահայտելու գործն սկսում է Ռոզետտյան արձանագրության հատուկ անուններից: Այստեղ նրա ուշադրությունը գրավում է այն, վոր յեզիպոսական վորոշ

նշաններ գրված են առանձին շրջանակների մեջ: Նա յենթադրում է, թե դրանք փարավոնների անուններ պիտի լինեն:

Ահա այդ շրջանակներին համապատասխան հունարենն արձանագրության մեջ, նույն տեղում, շրջանակի մեջ նա գտավ Պտղեմեոս անունը, այն փարավոնի, վորի պատվին յեգիպտական քուրմերը կազմել էին տեքստեր՝ յեգիպտական և հունարեն լեզուներով:

Պտղեմեոսի գրության հունական ձևն էր «Պտղմեոս»: Անհրաժեշտ էր այդ անունը գտնել հիերոգլիֆներով գրած յեգիպտական տեքստի մեջ, վորը և հաջողվում է Շամպոլիոնին:



Նկ. 11.

Շամպոլիոնը ընդունում է, վոր այդ նշանները տառեր են, բայց դա միայն յենթադրություն էր, վոր կարիք էր զգում ապացուցման:

Հետագա համեմատությունների ընթացքում առաջ են գալիս վորոշ դժվարություններ: «Ե» հնչյունի համարժեք նշանը Շամպոլիոնը չէր գտնում հիերոգլիֆների այդ խմբի մեջ:

Անհրաժեշտ էր գտնել ուրիշ ապացույցներ: Այդ գործում նրան ոգնում է հետևյալ բարեհաջող դեպքը:

1815 թվին, Ռոզետյան արձանագրությունը հայտարարելուց 16 տարի հետո, Յեգիպտոսի հարավում գտնվող Ֆեյե կղզում գտնվում է յերկու լեզվով քանդակված մի արձանագրություն, ուր, բացի Պտղեմեոս անունից կար նաև Կլեոպատրայի անունը:

Այստեղ ևս այդ անունները շրջանակի մեջ էին: Համեմատելով հունական բնագրի մեջ յեղած Կլեոպատրա անունը յեգիպտական հիերոգլիֆ բնագրի հետ, Շամպոլիոնը վերջնականապես համոզվեց, վոր այդ գրերը տառեր են:

Պտղեմեոս անվան մեջ «Ա»-ն բացակայում էր, բայց դրա փոխարեն Կլեոպատրա անվան մեջ հանդիպում են իրար նման յերկու նշաններ—բառի միջին և վերջին մասում յերկու արժիվ, վորոնք հավանաբար համապատասխանում են «Ա» տառին:



Նկ. 12.

Ինչ վերաբերում է Կլեոպատրա անվան հիերոգլիֆ գրության համապատասխան տառերին—նմանողությունը այստեղ կատարյալ էր: Հիերոգլիֆ նշանները միանգամայն համընկնում էին հունական բնագրում յեղած տառերին:

Շամպոլիոնը այսպիսով իր արամագրության տակ ուներ տասնևմեկ տառ—

Պ, Տ, Ռ, Լ, Մ, Ե, Ս, Կ, Ա, Տ, Բ:

Այս յեղանակով յեգիպտական ալբուբենի ընթերցանության բաղիսը գտնվում է: Կոպտերեն կոչված լեզվին տիրապետելու և սրամիտ կոմբինացիաների շնորհիվ, 1822 թվին Շամպոլիոնին հաջողվում է գտնել յեգիպտական արձանագրությունների ամբողջ գաղտնիքը:

Ֆ. Շամպոլիոնի մահից հետո նրա ձեռնարկությունը շաբունակեց գերմանացի գիտնական Բ. Լեպսիուսը, վորը վերջնականապես վորոշեց կարևորագույն հիերոգլիֆների ընթերցումը:

Ռուսաստանում յեգիպտաբանության հիմնադիրներ հանդիսացան Վ. Ս. Գոլենիշչևիլը, Ռ. Լեմմը և Բ. Ա. Տուրալյևը:

Սեպագրեր

Յերը Յեգիպտոսում զարգանում էր գաղափարագրային սիստեմը, Յեգիպտոսի հարևան մի ուրիշ յերկրում՝ Տիգրիս և Յեփրատ գետերի մեջ ընկած ընդարձակ գաղտավայրի հին բնակիչները՝ ակկադացիները և սումերները գեո շատ հին ժամանակներից հասել էին կուլտուրական զարգացման բարձր աստիճանի: Նրանց հայտնի յեր գիրը: Սկզբում սրանք ել յեգիպտացիների նման գրում էին պատկերազրով, բայց վորովհետև գրում էին չթըրծած կավի տախտակների-աղյուսների վրա, յեղեկից պատրաս-

տած սրածայր ձողիկներով, ուստի և պատկերները պարզ չեյին՝ դուրս գալիս և հետզհետե դժերի կամ սեպերի ձև եյին ստանում։ Դա ամենաբարձր, խառն և անհարմար սխառններից մեկն էր, վերից յերբեքից ոգավել և մարդկությունը իր մաքերն արտահայտելու համար։

Այդ գիրը իր սկիզբն և առնում հարավային միջագետքում սոսմերներից, ուր սկզբում կրում էր գաղափարագրի բնույթ։ Այստեղից այս գիրը տարածվում և ամբողջ Ասիա։

Սրածայր ձողիկներով կավե աղյուսների վրա փորում եյին վերևից մի քիչ հաստ, իսկ ներքևից բարակ, նետի նման սուր տեսք ունեցող նշաններ (V) զանազան դիրքերով, վերից և ստացվել և բեռագիր կամ սեպագիր անունը։

Սեպագիր անունը ավելի ճիշտ կլինի տալ այդ գրի հետագա շրջանի համար, վերտվհետև հնագույն արձանագրությունների մեջ պահպանված այդ գրի նախնական ձևը մեծ մասամբ կրում և նկարագրի բնույթ։ Գրային նյութի փոփոխմամբ այդ նշանները աստիճանական զարգացման հետևանքով ստանում են ավելի կտրացած, կապակցված ձև, ընդունում են իրենց վերջնական տեսքը (սեպաձև), տեղավորված տարբեր դիրքով և կոմբինացիաներով։

Սեպագիր գաղափարագրերը ժամանակին փոխարինվում են վանկային սխառնով։ Այսպիսով, սեպագիրը ներկայացնում և մի քանի հարյուր նշաններից կազմված վանկագիր, վերից ավելի գործածական են մոտ 300-ը։ Այդ թվից 50-ից ավելին գաղափարագիր էր, մոտ 100-ը ծառայում էր պարզ վանկերի և 130-ը բարդ վանկերի համար։

≡ II = ԲԱԿԵ՝ << = ՊԱԳԱԿՈՐ. X = ՅԵՐԿՈՐ.

II = ՊԵՐՔ, ՊԵՅ ԳԱՍ ԾՈՎ = ԿՐՏԱԿԱՅՏՈՐՍ ԵՅԻՆ ԿՍԲՈՂԶԱԿԱՆ

ԵՐԿՈՐ. ԲԱԿ II = Ա. — I = ՆԱ. III = ԲԱ

ԿՐՏԱԿԱՅՏՈՐՍ ԵՅԻՆ ԿԱԿԵՐ
Նկ. 13.

Սեպագրերի կատարելագործման և հնչյունական սխառնմի աստիճանին հասցնելու պատիվը պատկանում և պարսիկներին։ VI դարում, մեր թվականությունից առաջ, պարսիկները նվաճում են Բաբելոնը։ Նրանք բաբելական կուլտուրայի շատ տարրերի հետ միասին փոխ առան և սեպագրերը, վերոնցից ընտրելով մոտ 40 նշան, այն վեր են ածում այբբենականի։ Բաբելական գրի չորս հիմնական նշաններից (V << >) պարսիկները վերցնում են միայն յերկուսը՝ սեպ և անկյուն (V <) և գործնծելով դրանք տարբեր թվով ու կարգով, տալիս են նրանց տառային նշանակություն։

Պարսկական սեպագիր այբուբենը կազմված էր 36 համակցությունից։ Այդ տառային համակցություններից բացի, պարսիկները գործ եյին ածում նաև հետևյալ նշանները. — մարդկանց անունների առաջ V, աստվածների անվան առաջ V, քա-

ղաքների՝ V, յերկրների անվան առաջ՝ V V V

և, վերջապես, V նշանը՝ մի բառը մյուսից բաժանելու համար։

Սեպագրերի բացահայտումը տեղի ունեցավ բավական ուշ ժամանակներում։

Առաջին տեղեկությունները «բեռններից» կազմված գրության մասին հաղորդում և իտալացի վաճառական Պիետրո-Դեյլա-Վալլան, փորը 17-րդ դարում այցելում և Մերձավոր Արևելք։

Առևտրական նպատակներով նա գնում և Պարսկաստան, ճանապարհորդում այդ յերկրի հարավային կողմը՝ Պերսիդա։ Այստեղ նա պատահամբ ընկնում և հին Պարսկաստանի մի քաղաքի մեծ ավերակները, փորը, ավանդության համաձայն, Պերսեպոլիս էր — Աքեմենյան և Սասանյան հին պարսկական թագավորների մայրաքաղաքը, ուր նա տեսնում և սեպաձև այդ արձանագրությունները, տեղի ու տեղը ծանոթանում դրանց, «սեպագիր» անունն էլ ինքն և տալիս, յեղնելով նշանների արտաքին ձևերից։

Հետաքրքրությունից գրգռված՝ Պիետրո-Դեյլա-Վալլան պատճենահանում և այդ արձանագրություններից մի քանիսը և իր հետ տանում Յեվրոպա։

Այդ արձանագրությունները մեծ զարմանք եյին պատճառում գիտնականներին, վերոնք սակայն չեյին կարողանում բա-

ցանայտել դրանց միտքը, մանավանդ վոր այդ պատճենները ճշգրիտ չենին:

18-րդ դարում (1765 թվին), այդ ժամանակի խոշոր գիտնականներից մեկը՝ Կարստեն Նիբուրը այցելում է Պերսեպոլի, ծանոթանում այդ արձանագրություններին, նույնությամբ հանում դրանց պատճենները և խնամքով փոխադրում Յեվրոպա:

Յերկար ուսումնասիրություններից հետո գիտնականները յերևան բերին այն հանգամանքը, վոր այդ արձանագրությունները գրված են յերեք լեզվով, դասավորված յերեք արգացներով գրված սեպագրական նշանների տարբեր սխեմով:

Առաջին արգացը կազմված էր ամենից քիչ սեպագրական նշաններից (30), յերկրորդ արգացը կազմված էր 100 տարբեր նշաններից, իսկ յերրորդը՝ մի քանի հարյուր տարբեր նշաններից: Ուսումնասիրողները գալիս են այն յեզրակացության, թե առաջին արգացը հավանաբար գրված է այբուբենական գրությամբ, յերկրորդը՝ վանկային, իսկ յերրորդը՝ ամբողջական իմաստ արտահայտող գաղափարագրերով:

Այնուհետև, յերկար զիտողություններից հետո, ուսումնասիրողները առաջին արգացի մեջ գտան սեպագրական նշանների մեջ մեկը, վորը թեք սեպագիր գիրքով էր, գրված բոլորովին տարբեր տեղերում: Յենթադրվեց, թե այդ թեք սեպագիր նշանը վոչ այլ ինչ է, յեթե վոչ բառերը միմյանցից անջատելու նշան: Այսպիսով, կարելի յեղավ վորոշել, թե վորեւե բառ վերտեղից է սկսվում և վերտեղ վերջանում: Սակայն յերկար ժամանակ գիտնականները չենին կարողանում վորոշել այդ գրերի իմաստը:

Սեպագրությունը բացահայտելու առաջին փորձը տեղի ունեցավ 19-րդ դարի սկզբին, մի համեստ ուսուցչի՝ Ֆրիդրիխ Գրոտեֆենդի (գերմանացի) ձեռքով:

Գրոտեֆենդը 1802 թվին գիտելով պարսից Աքեմենյան արքաների հուշարձանները, նկատեց, վոր մի քանի նշանների խումբը հաճախակի կրկնվում է բոլոր արձանագրությունների մեջ, վորոնցով և սովորաբար սկսվում էին այդ արձանագրությունները: Նա գալիս է այն յեզրակացության, վոր այդ բառերը նշանակում են «արքա պարսից» կամ նման մի բան: Այստեղից դժվար չէր հետևություն անել, վոր «արքա պարսից» բառերից առաջ գրված բառը անուն է, ուր. «Դարեհ արքա պարսից»:

Գրոտեֆենդը ծանոթանալով պարսից թագավորների անուններին՝ Կյուրոս, Դարեհ, Գսերքսես, Արտաքսերքս և այլն, կարողացավ այդ արձանագրությունների մեջ գտնել Դարեհի և Գսերքսեսի անունները: Համեմատելով այդ անունները արձանագրությունների մեջ յեղած սեպագրերի հետ՝ նա տեսավ, վոր «Դարեհ» անվան պարսկական ամենահին ձևը—Դառիվուշ, իր տառերի քանակի կողմից միանգամայն հարմարվում է արձանագրությունների մեջ հաճախակի կրկնվող սեպագրերի մի խմբին:



Նկ. 14.

Այսպիսով, Գրոտեֆենդը իր տրամադրության տակ ուներ արդեն յոթ տառ:

Արձանագրությունների մի այլ տեղում նա նկատեց արդեն իրեն ծանոթ նշաններ-տառեր:



Նկ. 15.

Պակասում էր միայն առաջին տառը. դժվար չէր յենթադրել, վոր պակասող տառը «կ»-ն է, վոր լրացնելիս ստացվում է Կշարշա, վոր է Գսերքսես անունը:


Գրոտեֆենդին հաջողվում է գտնել ուրիշ տառեր ևս, վորը և հաստատում է նրա նախնական յենթադրությունը, թե թագավորների անուններին հաջորդող բառերը նրանց տիտղոսներն են:

Այսպիսով, սեպագրերի ընթերցման բանալին գտնված էր:

Գրոտեֆենդից հետո սեպագրերի ուսումնասիրության գործը շարունակեցին ուրիշ շատ գիտնականներ:

Դրանցից մեկին՝ անգլիացի սպա Բուլլինսոնին հաջողվեց

Հարգալ բարեկոնյան սեպագրության յերրորդ արգացը: Բոուլին-
սոնը ծառայության մեջ եր գտնվում պարսից բանակում: Նա լավ
ծանոթանում է Պարսկաստանին և Բեհիսթունի, կամ Բիստութունի
շրջանում գտնում է մեծ տարածություն ընող ամենամեծ սեպա-
գիր արձանագրություններից մեկը:



Նկ. 16. Սեպագիր արձանագրություն.

Դա պարսից Դարեհ արքայի արձանագրությունն էր, վոր
Պարսկաստանի խոտվություններին վերջ տալուց հետո, իր պետու-
թյան կենտրոնական մասում, մի քանի տասնյակ սափեն բար-
ձրություն ունեցող մի հսկա ժայռի վրա քանդակել է տալիս
400 տողից կազմված յերեքլեզվյան մի արձանագրություն:

Այս արձանագրության առաջին արգացը, ինչպես տեսանք,
բացահայտվեց Գրոտեֆենդի կողմից: Մնում էր յերկրորդ և յեր-
րորդ արգացների բացահայտումը—ընթերցումը:

Յերկրորդ արգացի արձանագրության ուսումնասիրման հիմ-

քը դրվեց միայն մեր ժամանակներում. այդ ուսումնասիրության
գլխավոր վաստակը պատկանում է խորհրդային մեծ գիտնական
տիտղեմիկոս Ն. Յա. Մառին:

Պարզվեց, վոր յերկրորդ արգացի արձանագրությունները
գրված են հաբեթական լեզվով, վորը ազգակից էր կովկասյան մի
քանի լեզուներին:

Բիհիսթունյան արձանագրության առկայության շնորհիվ
հնարավոր յեղավ բացահայտել յերրորդ արգացի արձանագրու-
թյունները: Կատարված մի շարք ուսումնասիրություններից
պարզվում է, վոր սեպագրության այդ մասի լեզուն պետք է
լինի սեմական սիստեմի լեզու, վորով մի ժամանակ խոսել են
հին հրեաները, վորով խոսում են արաբները, Հաբեշտանի մի
քանի ցեղեր և ասորիները:

Հայտնի չէ, վոր սեպաձև գրերի գործածությունը բարեկա-
ցիներից անցնում է ասորեստանցիներին, այնպես վոր Բաբելոնի
և Ասորեստանի արձանագրությունները միմյանց շատ մոտ են:

Սեմական գրի (հրեական, արաբական և ուրիշներ) առանձ-
նահատկությունն այն էր, վոր ձայնավոր տառեր չուներ, մինչ-
դեռ բաբելոնյան սեպագրության մեջ ձայնավորների համար
նշանագրեր գործ էյին ածվում: Այդ հանգամանքը ձիշտ կերպով
հաստատեց իռլանդացի գիտնական Նինիստը, վորը Բոուլինսոնի
հետ միասին, բաբելոնյան սեպագրության ընթերցման գործը
հիմնականում լրիվ կերպով ավարտեց:

Միայն 1857 թվին, յերկադ տարիների համառ աշխատան-
քից հետո, հնարավոր յեղավ բաբելոնյան և ասորեստանյան սե-
պագրությունների ընթերցման գործը ավարտված համարել:

Այդ տեղի ունեցավ այն ժամանակ, յերբ նոր գտնված
մի սեպագիր արձանագրության չորս պատճենները ուղարկվեցին
սեպագրերի վերլուծությամբ զբաղվող չորս գիտնականների, վո-
րոնք իրարից անկախ, սեպագրության մեկնաբանության խնդ-
րում հասնում են միատեսակ հետևանքին:

Բաբելոնյան գրության սիստեմի վերջնական սահմանումը
կատարվում է գիտնական Ուպերտի կողմից, վորը հանդիսանում
է հին ասուրա-բաբելական քերականության ստեղծողը:

Ասուրա-բաբելական սեմական լեզվի ուսումնասիրությունը
վերջնականապես կատարեց նշանավոր գիտնական Ֆր. Դելիշը:

(գերմանացի), վորը կազմում է այդ լեզվի քերականութունը և բառարանը:

Ռուսաստանում ասորաբանությամբ զբաղվում էյին Վ. Ս. Գոլենիշեկը, Մ. Վ. Նիկոլսկին, Ա. Կադեմիլիս Ն. Յա. Մառը:

Այս գիտնականները բավական մեծ աշխատանք կատարեցին խալդական սեպագրության ուսումնասիրության համար:

Արձանագրությունների վերջին բացահայտումը կատարվեց 1915 թվին, չեխ գիտնական Հրոզնու շնորհիվ: Դրանք հեթիթական արձանագրություններ էյին, գրված բաբելոնյան սեպագրով, վոր և հաջողվում է Հրոզնուն վերջին տարիներում կարգալ—բաշահայտել հեթիթական այդ հիերոգլիֆները:

Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ծայրամասում՝ ԲասՇամրա («Բողազ քոյ») կոչված վայրում 1929 թվին Փրանսիացիները հայտարերեցին կավե աղյուսների մի արևիվ: Այդ աղյուսները գրված էյին այբուբենի բնույթ ունեցող յուրահատուկ սեպագրերով:

Պարզվեց, վոր այդ գրությունը մոտավորապես 30 տարեի նշաններից կազմված մի այբուբեն է, վոր ստեղծվել է այդտեղ մինչ մեր թվականության յերկրորդ հազարամյակի կեսերը, բաբելական սեպագրության հիման վրա: Բողազ-քոյում գտնված տեքստերը գրված էյին հրեական և փյունիկյան լեզուներին շատ մոտ՝ սեմական լեզվով, վորը և յենթադրվում է նախատիպը յեվրոպական այբուբեններին:

Հնագիտական վիթխարի պեղումներ կատարեց գերմանացի նշանավոր հետազոտող Հերցֆելդը, վորին հաջողվեց Պերսեպոլում 1933 թվին հայտարերել թանգարժեք մի արևիվ:

3. ՀՆՁՅՈՒՆԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՄԱՍԻՆ

Գրի զարգացման նախնական աստիճանը, ասացինք, հանդիսանում է պատկերագիրը, յերբ մտքերի արտահայտման համար մարդու մոտ կազմվում է պայմանական նշանների, պատկերումների մի ամբողջ շարք:

Սակայն պատկերագրով դժվար էր արտահայտել ամեն տեսակ միտք, զբա յուրացման և մտքերի արտահայտման համար յուրաքանչյուր դեպքում ահագին ժամանակ էր պահանջվում:

Գրության այդ սխառմը կազմում էր թվով շատ սահմանափակ մարդկանց սեփականությունը (բացառապես քուրմերի), մի հանգամանք, վոր խոշոր չափով արգելակում էր ժողովրդական լայն մասսաների մտավոր զարգացման, առաջադիմության և արտադրության բարձրացման գործը: Դրա համար էլ պատկերագիրը աստիճանական զարգացման—կրճատումների, պարզեցման շնորհիվ վեր է ածվում առանձին-առանձին հնչյունների՝ տառերի: Այսպես որինակ՝ յեթե վորեւ մի բառ արտահայտվում էր այս կամ այն նկարով—նշանով, ապա ժամանակի ընթացքում, յերկար գործածությունից հետո, յերբ ձայնը և պատկերը դառնում են իրար հավասարագոր, առարկան պատկերող նշանը սկսում է արտահայտել վոչ թե առարկայի գաղափարը, այլ այն արտահայտող ձայնի նշանը—հնչյունական կոմպլեքսը:

Ասենք՝ վորեկեց գրաֆիկ մի նշան արտահայտում է «մարդ» կամ «ձեռք» հասկացությունը, և, բացի այդ իմաստից, սկզբում դա վոչ մի այլ բան չի նշանակում: Վորովհետեւ այդ նշանը կարգացվում է շարունակ «մարդ» կամ «ձեռք», ապա վերջիվերջո դա կսկսի արտահայտել վոչ թե մարդու կամ ձեռքի անունը—գաղափարը, այլ այն հնչյունները, վորոնք կազմում են այդ անունը: Այստեղից հնարավորություն է ստացվում այդ նշանը գործածել նույն ձայները պարունակող յուրաքանչյուր բառի հնչյունական պատկերացման համար:

Այսպիսով, հասնում է գրի պատմության այն շրջանը, վորը միանգամայն նմանվում է բանավոր խոսքի զարգացման վերջին շրջանին:

Սկզբում յուրաքանչյուր բառի, յուրաքանչյուր հասկացության համար պետք է լինել առանձին նկար, վորի համար էլ վերջիններս քանակը չափազանց շատ էր: Հետագայում, յերբ մարդիկ սովորում են բառերը բաժանել հիմնական հնչյունական մասերի, նրանք մտածում են նկարներով արտահայտել վոչ միայն ամբողջական հասկացություններ, այլ միայն առանձին վանկեր, առանձին հնչյուններ: Այսպիսով, յուրաքանչյուր բառն արտահայտվում էր արդեն վոչ թե մի նկարով, այլ մի քանի նկարների միացումով: Դրա հետ միաժամանակ, հարմարության համար նկարներն աստիճանաբար յենթարկվում են փոփոխման, պարզեցման և, վերջապես, փոխվում այն աստիճան, վոր վեր են

ածվում է իսկական տառերի, վորոնց նայելիս, առաջին հայացքից դժվար է գտնել նախնական ձևերի հետ ունեցած հեռավոր նմանությունը: Ժամանակակից տառային այբուբենը հանդիսանում է միայն գրի զարգացման աստիճանական ձևակերպումը, կատարելագործված, պարզ, հասկանալի մի ձև, յերբ մտքերի հաղորդման համար նշանակվում են արդեն վոչ թե մտածողության առարկաները—նկար կամ գաղափարադիր, այլ խոսքի առանձին հնչյունները—առանձին տառերը: Տառային այբուբենը ներկայացնում է գրավոր խոսքի վերջին, բարձրագույն ձևը:

Այբուբենի դուռը սովորաբար վերագրում են փյունիկեցիներին, վոր այնքան էլ ճիշտ չէ. վերջիններիս խոշոր ծառայությունը գիտական աշխարհի առաջ կայանում է միայն նրանում, վոր նրանք, վորպես առևտրական գործունյա ժողովուրդ, իրենց առևտրական նպատակների համար, ուրիշներից ժառանգություն ստացած գիրն ավելի պարզեցնում, կատարելագործում են և փոխանցում այն իրենց հետ առևտուր անող մյուս ժողովուրդներին:

Կարծիք կա, վոր տառային այբուբենն ստեղծել են հրեաները, Յեզիպոսում յեղած ժամանակ: Շնիցլերն իր «Иллюстрированная всеобщая история письмен» գրքում արտաքին կամ պատմական և ներքին՝ այբուբենի հատկություններից բղթած ապացույցներով, հրեաներին է վերագրում տառային այբուբենի ստեղծման առաջնության պատիվը:

Ընդհանրապես պիտի ասել, վոր թե լեզվի առաջացման և թե այբուբենի ստեղծման ուղղությամբ տարվող գիտական աշխատանքների—հետազոտությունների մեծ մասը մինչ այժմ յեղել է միակողմանի, միասնամուկ:

Մինչև այժմ տարվող հետազոտությունները՝ գտնել այբուբենն ստեղծող ժողովուրդին,—չի լուծել առաջադրված պրոբլեմը:

Ճիշտ այնպես, ինչպես մարդկային ցեղը կարող էր առաջ գալ միաժամանակ յերկրագնդի տարբեր մասերում (վորը և միակ, հավանական ճշմարտությունն է), վորտեղ նրա առաջացման համար կային անհրաժեշտ նախադրյալներ և այդ առաջ յեկած ցեղերը իրենց մտածողության զարգացման վորոշ աստիճանի վրա ստեղծում են իրենց առանձին-առանձին լեզուները,

այնպես էլ գիրը տարբեր ժողովուրդների մոտ կարող էր առաջ գալ միաժամանակ կամ ժամանակի վորոշ տարբերումներով:

Վերևում ասացինք, վոր յեզիպոսացիներին հաջողվում է պատկերադրին և վանկագրին զուգընթաց հնչյունական այբուբենի հիմքը դնել: Ստեղծվում է 24 նշանից բաղկացած մի այբուբեն, վորով հնարավոր էր հեշտությամբ արտահայտել յուրաքանչյուր բառ: Սակայն այդ հնչյունային գիրը մինչև վերջ չի տարվում, դրա կողքին պահպանվում և մեծ մասամբ դործադրման մեջ է լինում գաղափարադիրը: Իսկական այբուբենային գիր ստեղծելու հետագա քայլը անում են Յեզիպոսոսը նվաճող հյուսիսայինները:

Ըստ յեզիպոսացի պատմաբան Մանեսթոնի (ապրում էր մեր թվականությունից մոտ 300 տարի առաջ), XIV դինաստիայի փարավոնների ժամանակ, արևելքից Յեզիպոսոս են ներխուժում անհայտ մարդիկ, վորոնք իրենց անվանում եյին «հյուսիս», այսինքն՝ «հովիվների թագավորներ»: Յեզիպոսոսը տասնյակ տարիներ մնում է հյուսիսային տիրապետության տակ:

Հյուսիսայինները սովորելով յեզիպոսական գրերը, բազմաթիվ նկար-նշանագրերից ընտրում են մոտ յերկու տասնյակ և դրանք դարձնում տառեր:

(Հյուսիսայինները հավանաբար արևելյան սեմիտներ եյին, վորոնք իրենց ընտանիքներով գաղթել եյին Նեղոսի հովիտը):

Հյուսիսայինները յեզիպոսացիներին ծանոթացնում են ձիու ողտադործմանը և զինվորական տեխնիկայի մի շարք նվաճումներին:

Սակայն, ինչպես ասացինք, փյունիկեցիներին էր պատկանում յեզիպոսական հասարակության այդ մեծ հայտարարումը մինչև վերջ հասցնելու և տարբեր ժողովուրդների մեջ տարածելու պատիվը:

Փյունիկեցիների պատմական ծառայությունը կայանում է նրանում, վոր նրանք յեզիպոսական գրերից ընդորինակում, վերցնում են ավելի պարզ և հարմար մասը, ձայնական նշանները, որոնք գործում հյուսիսայինների ձեռք բերած հաջողությունները, կազմում իրենց այբուբենը և փոխանցում այն իրենց հետ առևտուր անող շատ ժողովուրդներին:

Հնչյունային պարզ այբուբենի առաջացման հարցը, դրա

անհրաժեշտութեամբ յոճանք, վոր պայմանավորված եր փյունիկյան հասարակութեան բնութեամբ, հանդես ե գալիս միաժամանակ փյունիկիայի դանազան կետերում: Փյունիկյան ստրկատիրական հասարակութեանը՝ արիստոկրատիան ստրուկների դեմ ունեցած պայքարի մեջ կարող եր հենվել միայն բնակչութեան ազատ մասսայի վրա: Ուստի և այդ հասարակութեանը ձեռնառն չեր բաժանել իրեն ժողովրդական ընդարձակ մասսայից, ստեղծել մի կուլտուրա, վոր անհասկանալի լինի բնակչութեան այդ մասին:

Ընդհակառակը, նա շահագրգռված եր սիրաշահել, ներդրավել բնակչութեան շարքային ազատ մասսան աշխատանքի մեջ, վորի համար և անհրաժեշտ եր ստեղծել ժողովրդին հասկանալի և հեշտութեամբ յուրացվող գիր:

Մյուս կողմից փյունիկյան ծովագնացների հասարակութեանն ինքն անձամբ չեր մասնակցում իր առևտրական հարաբերութեաններին: զրա համար ել նա կարիք եր զգում զրադետ, գործունյա, ճարպիկ առևտրական գործակալների, վորոնք կարողանային ներկայացնել իրենց առևտրական գործողութեանների համար համապատասխան արդարացուցիչ փաստաթղթեր, գործածել առևտրական գրքեր և այլն: Առևտրական այդպիսի հաշիվների, քարդ ուկերացիաների համար հիերոգլիֆային սիստեմը մեծ դժվարութեաններ եր ներկայացնում: Դժվար և անհնար եր զրանք կարճ ժամանակում սովորելը, զրանցով առևտրական բազմապիսի հաշիվներ ներկայացնելը, վորի համար անհաշիվ ժամանակ եր պահանջվում:

Դրա համար ել սոցիալական պահանջ ե զգացվում ստեղծել ամենից պարզ և հեշտ գիրը:

Փյունիկեցիք յեգիպտական այդ գրային նշանները յենթարկում են կարևոր փոփոխութեանների, հարմարեցնում իրենց գործնական պահանջներին: Այնպես վոր փյունիկյան այբուբենը շատ պարզ և հեշտ եր թե հիշելու և թե գրելու համար, մի գլխավոր հանգամանք, վորը ապահովում եր այդ գրի արագ և լայն տարածման:

Փյունիկեցիք, վորոնք առևտուր եյին անում Միջերկրականի ամբողջ ծովափնյա յերկրների հետ, այդ ժողովուրդներին սովորեցնում են և իրենց գիրը:

Յուրաքանչյուր ժողովուրդ վերցնելով այդ այբուբենը,

յենթարկում ե այն վորոշ ձևափոխութեան, հարմարեցնելով իր լեզվի առանձնահատկութեաններին: Փյունիկյան գիրը հսկայական ազդեցութեան և ունեցել շրջապատի ժողովուրդների վրա:

Վրմանք ընդունում են, թե տառային այբուբենը—գա սեմացիները ստեղծագործութեանն և, ուրիշները, ընդհակառակը, վերագրում են այն եգեյական քաղաքակրթութեանը: Ըստ Դյուսսոյի՝ թե հույները և թե փյունիկեցիք իրենց այբուբենը ստացել են եգեյացիներից: Փյունիկյան այբուբենը մեծ ազդեցութեան և ունեցել հունականի վրա, վորը և պարզ կերպով յերևում ե հունական տառերի անուններից. այնպես վոր այդ ազդեցութեանը անվիճելի փաստ ե:

Հույները թանգարթեք հավելում մտցրին այդ այբուբենի մեջ. նրանք ավելացրին ձայնավոր հնչյունները, վորոնք չկային փյունիկյան այբուբենի մեջ և գրելու սիստեմը փոխեցին ձախից աջ:

Այնպես առաջ ե գալիս հունարեն այբուբենի առաջին տառը՝ «ալֆա»—փյունիկյան արևմտասեմական «խալեֆի» փոխարեն (վոր նշանակում ե յեզ), «բեթա»—«բետ» կամ «բեյթի» փոխարեն (տուն): Առաջին յերկու տառերի անուններից կազմվում ե «ալֆաբետ»—այբուբեն բառը:

Հունարեն տառերի մյուս բոլոր անունները կատարելապես կարելի յե բացատրել փյունիկյան, արևմտասեմական լեզուների արմատների հիման վրա:

Փյունիկեցիների և արևմտասեմական ժողովուրդների յուրաքանչյուր տառն ուներ իր առանձին անունը, վորը արտահայտում եր մի առանձին հասկացութեան, որինակ՝ aleph—նշանակում ե յեզ, beth—տուն. gimel—լուծ, daelth—զուռ և այլն: Հույների մոտ դոյութեան ունեն տառերի նույն անունները, վորոնք սակայն չունեն վոշ մի ունալ նշանակութեան, այլ ուղղակի հանդիսանում են պայմանական նշաններ:

Հունական այբուբենը հավանաբար կատարելագործման և յենթարկվել հոների կողմից, տարածվելով ամբողջ Հունաստանում, վորտեղից և մեր դարագլխի սկզբներում, հույների և հռոմայեցիների շնորհիվ ընդգրկում ե ամբողջ Յվրոպան:

Հունական այբուբենից առաջանում են՝ լատիներենը, ետրուսկերենը. այդ այբուբենը որինակ և հանդիսանում գոթերի

այբուբենի առաջացման համար, վոր կազմվում է Վուլֆիլի կողմից և սլավոնականը՝ Կիրիլ և Մեֆոդիի կողմից—9-րդ դարում, վորի վրա ավելացվում են հետևյալ տառերը՝ Ж, Ҧ, III, III:

Լատինական այբուբենի ձևով են առաջանում հին գերմաներենը, հին անգլերենը և հին իռլանդերենը:

Լատինականի հիման վրա ստեղծվում են լեհերի և չեխերի այբուբենները:

Սերբերը, բուլղարները ոգտվում են ռուսական ձևավորված այբուբենից:

Արևելքում այբուբենի գլխավոր տարածողները հանդիսացան արամեացիք կամ սիրիացիք, վորոնց գրից և սկիզբը առնում ասիական ժողովուրդների գրերի մեծագույն մասը:

Արամեական այբուբենը անցնելով Առաջավոր Ասիա, ամենից առաջ հաստատվում է Իրանական բարձրավանդակի վրա, սեպագրեր գործածող ժողովուրդների մեջ, ուր վորոշ փոփոխություններ յենթարկվելուց հետո, վեր և ածվում պեհլեական գրի, դուրս մղում սեպագրերը և յերկար ժամանակ գործածություն մեջ մնում այդտեղ:

Սասանյան դինաստիայի անկումից հետո այդ գիրը հետզհետե դուրս է գալիս գործածությունից և իր տեղը զիջում արաբական այբուբենին: Պեհլեներն այբուբենից և սկիզբը առնում գենդական գիրը, վորով գրված է «Ձենդ-ավեստան»:

Արամեական գիրը արագ կերպով տարածվում է հսկայական տարածություն վրա, հասնելով մինչև Հնդկաստան:

Հունա-արամեական գրից են սկիզբը առնում նաև հայերեն և վրացերեն այբուբենները: Այբուբենի տառային անունները՝ aleph, beth, gimel, daleth և այլն (այբ, բեն, գիմ, դա և այլն), ըստ գերանականների յեզրակացությունների՝ հետագա ժամանակների արդյունք են: Տառերի այդ անունները մտածվել, հնարվել են, վորպեսզի ավելի հեշտ լինի դրանց հիշելը, յուրացումը:

Այբուբենը մի ժողովրդից անցնելով մյուսին՝ յենթարկվում է զանազան փոփոխությունների, յուր տառերի տեսքով և նշանակությամբ ավելի ու ավելի հեռանում իր սկզբնական ձևից և, այսպիսով, ժամանակին վերածվում ինքնուրույն տիպի մի ամբողջ շարք այբուբենների: Այդ աստիճանական զարգացման, տրոհման պատմական պրոցեսը հեշտ է նկատել, յեթե գոյու-

թյուն ունեցած և այժմ գոյություն ունեցող բոլոր այբուբենները հաջորդականութամբ շարենք իրար կողք-կողքի:

Այդ ժամանակ ակնհայտ է դառնում այբուբենի զարգացման պարզ պատկերը, վորը վկայում է այն, թե գոյություն ունեցած և գոյություն ունեցող բոլոր այբուբենները մարդկությունը ձեռք է բերել վոչ թե յերևակայական ստոծու վողորմածությունը, վոչ թե «աստվածային» շնորհքով ոժտված առանձին մարդկանց կողմից, այլ մարդկային հասարակության անդուլ աշխատանքի, համառ փորձերի հետևանքով: Այդ այբուբենները վերամշակվել և զարգացել են մեկը մյուսից, աստիճանաբար թեքվելով իրենց նախնական տիպից, ըստ վորում յուրաքանչյուր այբուբեն պետք է անցնի մի ամբողջ շարք միջանցիկ աստիճաններ, մինչև վոր հասնի իր վերջնական ձևին:

Այբուբենի զարգացմանը և դրա արագ տարածմանը նպաստում էր մի կողմից զարգացող կյանքը՝ իր քաղաքական-սոցիալական հարաբերություններով, մյուս կողմից՝ քրիստոնեյության տարածման շրջանում՝ քրիստոնեական պրոպագանդան, յերբ քաղաքիչները հեթանոսներին ներշնչում էին քրիստոնեական հավատը և միաժամանակ սովորեցնում նրանց կարդալ «սրբազան գիրը» իրենց ձեռքի տակ յեղած որինակին համապատասխան: Այսպիսով, յեղիպտացիներից՝ փյունիկեցիները և հույների միջոցով մարդկությունը ստանում է կուլտուրական մեծ ժառանգություն՝ իր միտքը վորևե նկարի միջոցով արտահայտող փորձերից, հազարամյակների ընթացքում այդպիսիք միանգամայն պարզ և ընդհանուրին հասկանալի նշաններով՝ այբուբենային գրով հաղորդելու սխտեմը—արվեստը և, պահանջի դեպքում, ամենակարճ ժամանակում սողադրում, տարածում ցանկացած տեքստից հազարավոր որինակներ:

Թվանշանները ևս տառերի նման սկիզբը են առել նույն նշանագրերից:

Հնագույն թվանշանները հավանաբար յեղել են գծիկներ, վորոնք գործ են ածվել զանազան համակցություններով: Այդ գծիկները սկզբում արտահայտվել են ձեռքի մատների զանազան դիրքերով, վորովհետև հնում մարդիկ իրենց հաշիվները մատներով էլին անում: Մեղանում ևս մինչևորհրդայնացումը, յերբ մարդիկ անգրագետ էին, իրենց հաշիվները պահում էին այդ

Թվանշաններով ու շրջանակներով, նշանակելով իրենց պահանջները պատերի վրա:

Արդեն Գրոտեֆենդին և առաջին ասորագետ գիտնականին հաջողվում է վորոշել, վոր սուամերները և Միջագետքի հետագա բնակիչները ժամանակակից ժողովուրդների նման ոգտվում էյին թվագրության տասնորդական սխտեմով: Ասորեստանցիները սեպագրերը գործ էյին ածում նաև վորպես թվանշաններ: Նրանք թվանշանների արտահայտման համար ունեյին հետևյալ յերեք հիմնական նշանները, պարզ միավորների համար նշանակում էյին ուղղաձիգ սեպ (V), տասնյակների համար՝ յերկու սեպերի համակցութունը, վոր հիշեցնում է ժամանակակից անհավասարության նշանը ($<$) և հարյուրյակների համար՝ ուղղաձիգ սեպի և հորիզոնական սեպի հարակցութունը ($V>$)

V	<	V>
1	10	100

Մի քանի միավորներ կամ տասնյակներ արտահայտում էյին գումարման սկզբունքով, տասնյակները գրելով միավորներից ձախ:

Որինակ.	VVV	<V	V
	VVV	<V	V
	V		<V
	7	11	23

և այլն:

Հարյուրյակների, հազարների և ել ավելի մեծ թվերի արտահայտման համար գործ էյին ածում բազմապատկման սկզբունքը

Որինակ.	<V>	<<V>
	10.100=1000	10.10.100=10000

Յեղիպտացիները թվանշանների փոխարեն ամենից շատ գործ էյին ածում հիերոգլիֆները: Մեկ թիվը նշանակում էյին վորպես չափաձող, 10-ի համար՝ պարզած թվերը, 100-ի համար՝ արմավենու վորոված տերևը, 1000-ի համար՝ լոտոսի ծաղիկը, 10.000-ի համար՝ մատը. միևնույն պատկերում էյին գորտի պատկերով, վորովհետև Նեղոսի վարարման ժամանակ այդ կենդանիները անհամար քանակութամբ էյին հանդես գալիս:

Հրեաները, հույները, ինչպես նաև հայերը իրենց այբուբենի տառերն էյին իբրև թվանշաններ գործածում: Վոր հայերը հնում իրենց այբուբենը գործ են ածել վորպես թվանշաններ—այդ մենք

տեսնում ենք շատ հաճախ հին արձանագրությունների և գրքերի մեջ:

Նույնիսկ այդ տառերով հայերը ունեցել են իրենց խնդրագիրքը: Անանիա Շիրակացին (VII դարի հայ ամենանշանավոր գիտնական) կազմել և թվարանական խնդիրների ժողովածու, վոր կրում է՝ «Յողագս Հարցման և Լուծման» վերնագիրը: Այդ ժողովածուն նշանավոր է վոչ միայն իբրև առաջին թվարանական աշխատանքը, այլև շատ արժեքավոր և իր մեջ ընդգրկող պատմական, տեղագրական, սովորությունների ու բարքերի վերաբերյալ տեղեկություններով: Այդ հարցերից յերկուսը վորպես որինակ բերում եմ այստեղ՝ վերցված Գ. Տեր-Մկրտչյանի «Անանիա Շիրակացի» աշխատությունից:

Ժ Հարցումն. Լոք մի կալան ի Մարմտի ի գետն Երասխ և ես կշոեցի զնա և գտաւ զլուխն չորս մասն ամենայն կշոյն՝ և տուտն. 2., և մէջքն. 30-լիտր: Արդ զիտեա, թէ ընդ ամենայն քանի՞ լիտր էր:

Ժէ Հարցումն. Նաւ մի երթայր լի ցորենով և կէտ մի զհետ մոեալ նաւին՝ նաւորդքն երկեան և ընկեցին նմա կեր զհասարակ ցորենոյն: Եւ յ. բ. աւուրն ընկեցին զհինգ մասն մնացելոյն. յերրորդումն զ. ը., ի չորրորդումն զ. է.: Ապա ի նաւահանգիստն հասին և մնաց. իՄ.: Արդ զիտեա, թէ ընդ ամենայն քանի՞ լեալ էր:

[illegible]

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԸ

	Σ ΝΙΟΠΙΟ ΔΟΥΤΥ ΘΧΤ
	Σ ΗΙΟΛΣΟ ΔΜΤΥ ΘΧΤ
	Σ ΗΙΟΛΣΟ ΔΜΤ
	Σ ΗΙΟΛΣΟ ΔΣ ^Χ
αααααααα	Σ ΔΒΔΜΕΝΙΟΝΥΧΣ
αααααααα	Σ ΔΒΔΜΕΝΙΟΝΥΧΣ
αααααααα	Σ ΔΒΔΜΕΝΙΟΝΥΧΣ
αααααααα	Σ ΔΒΔΜΕΝΙΟΝΥΧΣ
αααααααα	Σ ΔΒΔΜΕΝΙΟΝΥΧΣ

[illegible]

4. ՀԱՅԵՐԵՆ ՏԱՌԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձորորդ գարի յերկրորդ կեսին
Հայաստանը կռվախնձոր եր հան-
դեսանում յերկու պետութիւն-
ներէ՝ Հոռմեական կայսրութեան
և Պարսկաստանի միջև։ Սրանցից
յուրաքանչյուրն աշխատում եր
իր գերիշխանութիւնը տարածել
հայերի վրա։

Այս պետութիւնների թշնամական հարաբերութիւնները մի կողմից, մյուս կողմից հայ նախարարութեան մեջ յեղած ներքին խռովութիւնները ուժասպառ են անուամբ Հայաստանը, վերջ տնտեսական ու քաղաքական շատ աննպաստ պայմանների մեջ եւ ընկնում, կորցնում իր քաղաքական ինքնուրույնութիւնը՝ 384 թվին բաժանվելով Պարսկաստանի եւ Հռոմեական կայսրութեան միջև, Հայաստանի արեւելյան մասը (մոտ $\frac{4}{5}$ -ը) անցնում եւ պարսից գերիշխանութեան տակ, իսկ արեւմտյան մասը (մոտ $\frac{1}{5}$ -ը)՝ Հռոմեական կայսրութեան:

Աշխատավոր հայ ժողովուրդը
տնքում եր կրկնակի շահագոր-
ծողներին՝ հայ և ոտար, ծանր լծի
տակ։ Նա խարխավում եր տգի-
տության ու խավարի մեջ. չկար
ժողովրդի մասին մտածող, նրա
բազմաթիվ կարիքներին բավա-
րարութուն տվող։ Այս դրու-
թյունը զուգադիպում եր քրիս-
տոնեյության արագ կերպով տարածման ժամանակաշրջանին։

Յերրորդ դարի վերջերից մինչև չորրորդ դարի սկզբները քրիստոնեյությունը պետական կրոն է հայտարարվում Հայաստանում: Քրիստոնեյության ընդունումը համընկնում էր հայ ֆեոդալների շահերին:

Յեղեսիայում բացվում է մի մեծ դպրոց՝ «աստվածաբանական համալսարան», ուր ամեն կողմից ուսանողներ եյին գնում սովորելու: Հայերից էլ եյին գնում այնտեղ սովորելու: Ղազար Փարպեցին (V դարի հայ պատմիչ) պատմում է այն մեծ դժվարությունների մասին, վոր կրում եյին հայ ուսանողները Յեղեսիայում ասորերեն լեզուն սովորելու համար:

«Քանզի հոգացեալ յարածամ տրտմէր երանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս, որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեգերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան»*:

(Յերանելի Մեսրոպը շարունակ արտմում էր տեսնելով Հայաստանի յերիտասարդների մեծ դժվարությունները և խոշոր ծախսերը, վորոնք մեծ թոշակով, յերկարատե ճանապարհներով և յերկարատե չարչարանքներով մաշում եյին իրենց կյանքը ասորի գիտության դպրոցներում):

Քրիստոնեյությունը Հայաստանում հաստատվելուց հետո Հայաստան են գալիս ասորի և հույն քարոզիչներ, վորոնք հայ յեկեղեցիներում ժամասացությունը կատարում եյին ասորի և հույն լեզուներով:

Ժողովուրդը չնայած դավանում էր քրիստոնեյական կրոնը, բայց չէր ըմբռնում նրա եյությունը, վորովհետեւ «սուրբ գիրքը» ընթերցվում էր ասորերեն և հունարեն լեզուներով:

«Քանզի պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն աշապիսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութենէ լեզուին ասորւոյ»**:

(Վորովհետեւ յեկեղեցական ծիսակատարությունը և զրքերի ընթերցումը՝ վանքերում և յեկեղեցիներում ասորերեն լեզվով եյին կատարում, վորից այսպիսի մեծ յերկրի ժողովուրդը վռնէնչ

* Ղ. Փարպեցի—Պատմություն Հայոց, էջ 28—29:

** Նույն տեղ, էջ 29:

չէր կարող լսել և ոգտվել, վորը ժողովրդին անոգտակար էր՝ ասորոց լեզուն չգիտեանալու հետեանքով):

Ասորի և հույն լեզուները սովորելու համար հայերը վոչ միայն գնում եյին Ասորիք և Հունաստան, այլև Հայաստանի մեջ իսկ բացվում են դպրոցներ գուտ այդ լեզուներով:

«Եւ ի տեղեաց տեղեաց սահմանացն Հայոց՝ տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի դաւառաց բազմութիւն մատաղ մանկուոյ ածել յարուեստ դպրութեան, և կարգել ի վերայ հաւատարիմ վարդապետս, առաւել զազգս պղծագործ քրմացն և զմանկունս նոցա ի նոյն ժողովել, գումարել յարժանաւոր տեղիս դասս դասս և դարման ոռնկաց կարգել: Եւ զնոսա յերկուս բաժանեալ, զմասնս յԱսորի դպրութիւն կարգեալ, և զմասնս ի Հելլեն»*:

Հայ հոգևորականությունը չորրորդ դարում մեծապէս կախման մեջ էր գտնվում ասորական և ապա հունական հոգևորականությունից:

«Այդ կախումից ազատվելու ձգտումը, սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում գերակշռող դեր խաղալու անհրաժեշտությունը և դրա հետ միասին քրիստոնեյության վերջնական արմատավորումը դասակարգային գերիշխանությունն ապահովելու նպատակներով՝ հոգևորականությանը մղում եյին դեպի սեփական զրականություն ստեղծելու գործը, վորը հանդիսանում էր դասակարգային ինքնահաստատման մի ֆակտոր, միաժամանակ և կուլտուրական հառաջադիմական մի խոշոր քայլ»**:

Այդ հիմնական դրույթի հետ միասին կար և մի ուրիշ կառուր հանգամանք.— դա ընդհանուր քաղաքական և կուլտուրական կյանքի զարգացումն էր, վորից գերծ չեյին կարող մնալ և հայերը, վորոնք շրջապատված եյին իրենց գիրն ու զրականությունը ունեցող, կուլտուրական զարգացման բարձր աստիճանի վրա գտնվող մի շարք խոշոր պետություններով: Ահա այս պայմաններում, հայ աշխատավոր ժողովրդի զավակներից մեկի՝ Մեսրոպ Մաշտոցի՝ «... ի Տարոնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ» (Տարոն գավառից, Հացիկ գյուղից, Վարդան անունով մեռած մի մարդու վորդի) (Կո-

* Ա. Գ. Թանգեղյան՝ Պատմութիւն Հայոց, էջ 424:

** Ա. Ղարիբյան—Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն:

րիւն) — ձեռքով, 5-րդ դարի սկզբներին՝ 406—412 թվերին, տեղի յե ունենում կուլտուր-քաղաքական մեծ արժեք ունեցող հայ գրերի գյուտը:

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Տարոն (Մուշ) գավառի Հացիկ գյուղում, Վարդան անուհով մի աշխատավոր գյուղացու ընտանիքում:

Ինչպես առհասարակ աշխատավոր ժողովրդի ծոցից դուրս յեկած շատ քչերին եր հաջողվում այն ժամանակ ոգովել գիտության պտուղներից, ստանալ անհրաժեշտ ուսում, այնպես ել այդ բացառիկ յերջանիկներից մեկին՝ Մեսրոպ Մաշտոցին, հաջողվում է ստանալ մեծ կրթություն:

Մեսրոպը մանուկ հասակից սովորում է Աշտիշատում, Ներսես մեծի մոտ, սովորում հռչարեն, ասորերեն, պարսկերեն լեզուները: Իր ուսուցչի՝ Ներսես մեծի մահից հետո Մեսրոպը գինւորական ծառայության է մտնում Խոսրով IV Թագավորի մոտ, ուր իր վարքով, ջանասիրությամբ և սիրալի բնավորությամբ շատ սիրելի յե դառնում արքունիքին և ամբողջ գործին:

Այնուհետեւ Մեսրոպը նշանակվում է պալատական քարտուղար, սակայն չկարողանալով տանել պալատի գեղի, շվաշտ կյանքը, ուր տիրում եր յեսամոլությունը, կիրքը, փառքը, նախանձը, դավաճանությունը, անմիաբանությունը, Վռամշապուհի Թագավորության առաջին տարին թողնում է պալատը և մտնում մենակյացների շարքը: Նա լավ ծանոթ լինելով հույն և ասորի լեզուներին, իր շուրջն է հավաքում մեծ թվով աշակերտներ և սկսում նրանց պատրաստել քարոզչական աշխատանքի:

Իր գործունեյությունը Մեսրոպն սկսում է Գողթան գավառից, ուր դեռ ևս մնացել եր հեթանոսությունը, և քարոզում քրիստոնեյություն:

Քարոզելու ժամանակ Մեսրոպը ստիպված եր լինում կարգալ սուրբ գիրքը ասորերեն և ապա թարգմանել, բացատրել հայերեն, ուր նա մեծ դժվարությունների յեր հանդիպում:

Մեսրոպը տեսնելով այդ դժվարությունները և ըմբռնելով ոտար լեզվով գրի գործածության անարդէյունավետ լինելը, նրա մեջ միտք է հղանում ունենալ սեփական լեզվով գիր ու գրականություն, ժողովրդի մտավոր խավարը փարատելու համար: Այդ նպատակով նա գնում է Վաղարշապատ և ժամանակի Սահակ կաթողիկոսին հայտնում իր միտքը:

Սահակ կաթողիկոսը մեծ համակրանքով է վերաբերվում այդ խելացի, ոգտակար ձեռնարկությանը, քաջալերում նրա այդ միտքը և խոստանում իր լայն աջակցությունը:

«Բայց զի ոչ էր գիր հայերէն լեզուիս՝ բազում պակասութիւն լինէր ճշմարտութեան աւանդիցն՝ առ աշակերտախն. իսկ երանելի վարդապետն տարակուսեալ ի խորհուրդս իւր՝ առ Աստուած ապաւինէր, որ կարողն է յամենայնի, ցուցանել զգիր հայ լեզուիս, որով նուազօրութիւնն յառաւելութիւն գայցէ գրով: Եւ յարուցեալ այնուհետեւ հասանէր առ Սուրբն Սահակ հայրապետն Հայոց, յազապս գրոյ նշանագրաց. եզիտ զնա առաւել ևս փափաքող այնմ: Եւ յետ բազում ջանից և աշխատութեանց և ոչ ինչ օգտելոյ, դարձեալ յաղօթս ապաւինելով՝ յԱստուծոյ խնդրէին որում ցանկային: Եւ մեկնեալ ի միմեանց, և յանձն առեալ ղխտամարերութիւն՝ ճգնէին առաւել քան զառաւելս»*: (Բայց վորովհետեւ հայերեն լեզվով գիր չկար, ուստի և դժվարություններ եյին լինում աշակերտների հետ քարոզչական աշխատանք տանելիս, իսկ յերանելի վարդապետը տարակուսելով իր մտքի վրա, ամենակարող աստծուն և ապավինում, ցույց տալ հայերեն լեզվով գիր: Յեւ զնում է հայոց Սուրբ Սահակ հայրապետի մոտ, հայտնում հայերեն գրի մասին իր ցանկությունը, գտնում նրան այդ գործում ավելի ևս նախանձախնդիր ու փափագող: Յեւ շատ ջանքերից ու աշխատանքներից հետո, վորից վոչինչ չեն ոգտվում, դարձյալ աղոթքներով ապոծուն են ապավինում՝ խնդրելով իրենց ցանկացածը):

Վաղարշապատում Սահակ կաթողիկոսի հրավերով գումարվում է մի մեծ ժողով, ուր հրավիրվում է նաև Վռամշապուհ Թագավորը: Ժողովի նպատակն եր իմիջի այլոց հայերեն այբուբենի խնդիրը:

Թագավորը հայտնում է, վոր իր Ասորիքում յեղած ժամանակ Հաբել քահանայից լսել է, թե Դանիել անունով մի ասորի յեպիսկոպոս հայերեն լեզվի համար առանձին նշաններ է հարմարեցրել:

Ժողովն անմիջապես Թագավորի հրամանով, Վահրիճ անունով մի իշխանի ուղարկում է Հաբել քահանայի մոտ, վոր այդ ասորի Դանիել յեպիսկոպոսի ազգականն եր, բերելու այդ գրերը:

* Գ ո Ր Ի Ն — Պատմութիւն վարուց և մահուան Սուրբն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, եջ 46—47:

Հարելը լսելով այդ, շտապով գնում է Դանիելի մոտ. նախ՝ ինքը սովորելով այդ գրերը ու նրանց հնչյունները, բերում է թագավորի մոտ:

Վառաձայունը այդ գրերը հանձնում է Սահակին և Մեսրոպին:

Սահակի կարգադրությամբ Մեսրոպը աշակերտներ է հավաքում իր շուրջը և սկսում նրանց գրագիտություն սովորեցնել այդ տառերով: Այդ գրերը Դանիելյան անունն են ստանում: Սակայն ամբողջ յերկու տարվա փորձերից հետո պարզվեց, Վոր այդ տառերով անհնար էր հայերեն լեզվի բոլոր հնչյուններն արտահայտել: Այդ նշանադրերը բավական չեյին մեր լեզվի հնչյունները ամբողջությամբ արտահայտելու:

Պակասում էին ձայնավորները և մի քանի բաղաձայն տառեր:

Սակայն առաջին փորձի անհաջողությունը չի վհատեցնում Մեսրոպին: Նա զգալով այդ գրերի պակասը, մի խումբ աշակերտներով գնում է Միջագետք՝ Դանիել յեպիսկոպոսի մոտ, հույս ունենալով նրա մոտ գտնել ուրիշ տառեր ևս, վորպեսզի ավելի հիմնավոր, ավելի ճիշտ կերպով տեղեկանա նրանից այդ նշանագրերի կազմության մասին:

Այստեղից անցնում է Ամիդ, ապա Յեզեսիա՝ Պղատոս անունով մի ճարտասանի մոտ, գնում է Փյունիկիա, այցելում Կեսարիայի և Յերուսաղեմի գրադարանները, յերկար թափառումներից հետո հասնում Սամոսատա և խորհուրդ հարցնում Հռոփանոս գիտնականից, Վորը շատ լավ ուսումնասիրել էր հունական լեզուն և գրականությունը:

Այսպիսով, Մեսրոպը Դանիել Ասորու, Պղատոսի և Հռոփանոսի խորհուրդներով և իր իսկ տընայան աշխատանքով, սեմական և հունական այբուբենների նմանողությամբ, զգալի ձևափոխություններով ու լրացումներով կազմում է հայկական այբուբենը, Վորը տեղի յե ունենում Յեզեսիայում (Ստորիքում), ապա Հռոփանոսի աջակցությամբ կատարյալ ձև տալիս այդ տառերին, դասավորելով հունական այբուբենի համաձայն: Այնուհետև Մեսրոպը իր Հովհան և Հովսեփ յերկու ոգնականների աջակցությամբ, նույն Հռոփանոսի հետ անցնում է թարգմանություն: Թարգմանում են Սողոմոնի առակները և նոր կտակարանը: («Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»):

Նորագյուտ գրերն այնուհետև բերում են Հայաստան, ուր Վառաձայունի և Սահակ Պարթևի ոգնությունը բաց են անում գալոցներ, հավաքում յերեխաներ և սովորեցնում նրանց այդ գրերը:

Այդ նոր տառերը կոչվեցին «Մեսրոպյան» կամ յերկաթադիր: Մեսրոպը ընդհանուր տեսուչ է նշանակվում Արևելյան Հայաստանում և ամեն տեղ գալոցներ՝ բանալով՝ սովորեցնում են այդ նոր գրերը:

Սահակը Մեսրոպի և ուսուցիչների ընկերակցությամբ գնում է Հայաստանի արևմտյան մասը, Վոր հունաց իշխանության տակ էր, նոր տառերի դործածությունը այնտեղ ևս անցկացնելու համար:

Մեսրոպի աշակերտ Կորյունը հետևյալն է ասում նորագյուտ տառերի մասին.

«Իսկ իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզույն, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ յայլոյ դարձութեանց թաղեալք և յարուցեալք զիպեցան:

Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, և նմին երս խնդրէին ժամանակս ինչ: Վասն որոյ առեալ երանելոյն Մաշթոցի դաս մի մանկտոյ՝ հրամանաւ արքայի, և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր ի հինգերորդ ամի Վառաձայնոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝ ի քաղաքս երկուց Ասորոց. որոց առաջինն Եզեսիա կոչի, և երկրորդն Ամիդ անուն: Ընդդէմ լինէր սուրբ կախկոյտացն. որոց առաջնոյն Բաբիլոս անուն և երկրորդին Ակակիտ. հանդերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքին պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունէին հոգաբարձութեամբ, ըստ Քրիստոսի անուանելոցն կարգի:

Իսկ աշակերտասէրն վարդապետին՝ գտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դարձութիւնն կարգէր, և զոմանս յունական դարձութիւնն՝ անտի ի Սամուսատական քաղաքն գումարէր, և նորա իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եղեալ զաղօթս և զտքնութիւնս և զպապատանս արտասուելից, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծս, յիշե-

լով զսասցեալսն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հեծեծեսցես, յայն-
ժամ կեցցես»:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւ-
րոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարզեց իսկ
վիճակ յամենաշնորհողէն Սատուծոյ: հայրական չափուն ծնեալ
ծնունդս նորոգ և սքանչելի սուրբ աջովն իւրով, նշանադիրս
հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ անուանեալ և
կարգեալ յօրինէր սիրորայիւք և կապօք: Եւ ապա հրաժարեալ
յեպիսկոպոսացն սրբոց, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի
քաղաքն Սամոստացոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն
և յեկեղեցոյն մեծարեալ լինէր: Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ
ոմն հեղինակն զսլրութեան Հռոմանոս անուն գտեալ, որով դա-
մենայն ընտրութիւնս նշանադրոյն՝ զնրբագոյնսն զկարճն և զեր-
կայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յան-
կուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանգերձ արամբք եր-
կուք, աշակերտօքն իւրովք: որոյ առաջնոյն Յովհան անուն կո-
չէին, յեկեղեցաց դաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պա-
ղանական տանէն: Եւ եղեալ սկիզբն նախ յԱռաւելացն Մոգմոնի
որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լի-
նել, ասելով՝ եթէ՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ
զբանս հանճարոյ»: Որ և զբեցաւ ձեռամբն այնորիկ զրչի, հան-
դերձ ուսուցանելով մանկունս գրիչս նմին գալութեան»*:

Մովսէս Խորենացին նույն կապակցությամբ ասում և.

«Զկնի այսորիկ ինքնին Մեսրոպ իջեալ ի Միջագետս՝ հան-
դերձ աշակերտօք առ նոյն Դանիէլ, և ոչ աւելի ինչ գտեալ քան
զառաջինն, անցանէ և յեղեսիայ առ Պղատոն ոմն ճարտարասան
հեթանոս՝ իշխան գիւնին: Եւ նորա խնդութեամբ ընկալեալ, և
զոր ինչ միանգամ ի միտ առնոյր բան հայերէն յինքն առեալ,
և շատ ջանացեալ և ոչ օգտեալ, գտղիտութիւն խոստովանեաց
հոգիտորն: Եւ զայլ ոմն ասելով յոյժ հասու, վարդապետ իւր
եղեալ յառաջագոյն, և ապա առեալ զճարտարացն զբանն ի նոյն
գիւնէն Եղեսիայ, և գնացեալ քրիստոնէութեան հաւատաց,
որոյ անուն Եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լցուցանել զփա-
փաքդ քո»:

* Կորին—Պատմութիւն վարուց և մահուան Սրբոյն Մեսրոպայ վար-
դապետի մերոյ թարգմանչի, եջ 13—15:

Յայնժամ Մեսրոպայ օգնականութիւն ի Բարիլոսէ եպիսկո-
պոսէ գտեալ, և անցեալ ընդ Փիւնիկէն ի Սամոս գիւմէ. քանզի
Եպիփանոս վճարելով զկենցաղս՝ թողեալ լինի աշակերտ մի
անուանեալ Հռոմանոս, հրաշալի արուեստիւ հեղէն զըջութեամբ,
որ ի Սամոս էր միայնացեալ: Առ սա երթեալ Մեսրոպայ, և
յայտմ ես անշահ մնացեալ, յաղօթս ապովինիս...»:

«...Եւ յարուցեալ յաղօթիցն, ետեղծ զնշանադիրս մեր՝
հանդերձ Հռոմանոսիւ կերպածեալ զգիրն Մեսրոպայ առ ձեռն
պատրաստ. փոխատրելով զհայերէն աթուրթայսն ըստ անսայթա-
քութեան սիւղարայից հեղինացոց: Եւ իսկոյն ի թարգմանու-
թիւն ձեռն արկեալ, խորհրդարար սկսանելով յԱռաւելաց, բովան-
դակ զքսան և երկու յայտնիսս և զնոր Կտակս յեղուլ ի հայ բան,
նա և աշակերտք նորա Յովհան եկեղեցային և Յովսէփ պաղնացի.
միանգամայն և զարուեստ զըջութեան ուսուցանել տալով իւրոց
մանկագոյն աշակերտացն»*:

Մեր պատմիչներից վոմանք և բանասերների մեծ մասը ըն-
դունում են, վոր հայերը հնում, 5-րդ դարից դեռ շատ առաջ,
հաթերեն նշանագրերից և խալդէյան բեռնագրերից հետո ունեցել
են իրենց առանձին տառային այբուբենը (իւր թիւ Արշակ թա-
գավորի որով, 128—115 թ. մինչ մեր թվարկությունը), վոր
հենց այդ տառային այբուբենն էր, վոր գտնվեց ասորի Դանիել
յեպիսկոպոսի մոտ:

Հազար Փարպեցին խոսելով Մեսրոպ Մաշտոցի մասին, վորը
զգալով ոտար լեզվի և գրի (ասորի և հույն) գործածության
անարդյունավետությունը, նախքան Դանիելին դիմելը, տողոր-
ված հայերեն տառեր հորինելու ցանկությամբ, ասում և. «Չայս
ի բազում ժամանակս զմտաւ ածեալ երանելի առն Մաշտոցի, և
փղձկացեալ յանձն իւր, մանաւանդ թիւ գոն նշանադիրք հայերէն
լեզուոյս, որով հնար է՝ ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ
բարբառով, շահել զոգիս արանց և կանանց առ հասարակ յամե-
նայն եկեղեցիս բաղմութեանն»**:

Վարդան պատմիչը նույնպէս ընդունում է, վոր Մեսրոպից
առաջ հայերն ունեցել են իրենց գիրն ու գրականությունը:

* Մովսէսի Խորենացոյ՝ Պատմութիւն Հայոց, եջ 334—336:

** Հազար Փարպեցոյ՝ Պատմութիւն Հայոց, եջ 29:

Այդ առթիվ նա ասում է. «Յեօթն ամին սորա [Վառնապուհի] և յառաջին ամին Արտաշրի որդւոյ Շապհոյ սուրբն Մեսրոպ յօրինէ հայերէն դպրութիւն՝ քսան և երկու գիր առ Դանիէլի ասորւոյ գտնալ ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս անհոգացեալ եղև յառաջնոյն՝ յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք»։ «Մեծին Վարդանայ Բարձրեղեցւոյ՝ Պատմութիւն տիեզերական»։

Ազաթանգեղոսը խոսելով Գր. Լուսավորչի և Հռիփսիմի կույտի նահատակութեան մասին, ասում է, վոր նրանց ասածները քարտուղարները նշանադրելով գրում եյին։ «Արդ՝ իբրև այս շփոթ. ամբոխի եղև ի նոցանէն ի մէջ կուտակելոցն մարդկան բազմութեան՝ ոմանք ի մեծամեծ սպասաւորացն արքունի անդէն ընթացան պատմել թագաւորին զամենայն բանս նոցա. քանզի դիպեցան անդ նշարագիրք, որ գրեցին զամենայն բանս, և ընթերցան առաջի թագաւորին»*։

Իս. Հարությունյանը իր «Հայոց գիրը» աշխատութեան մեջ (եջ 253) ասում է. «Մեսրոպյան այբուբենից ղեռ շատ առաջ հայերը արդեն ունեցել են սեփական այբուբեն, վոր գործածութեան մեջ է յեղեր»։

Համեմատելով հայերեն այբուբենը սեմիտական և հունական այբուբեններին հետ, նա յեզրակացնում է, վոր մեր այբուբենի տառերն անմիջապէս ծագում են սեմիտական տառերից, վորոնց մեջ հայ տառերն առաւելապէս նմանութիւն են վրդենիկյան տառերին և երբին։ Այնուհետև հայտարարում է. «Այս բոլորից հետո գալիս ենք այն յեզրակացութեան, վոր հայերն անմիջապէս վրդենիկեցիներից կամ թե ասորա-բաբելացիների միջնորդութեամբ, վերջնելով վրդենիկյան 22 տառերից բազկացած այբուբենը, մի քանի փոփոխութեաններով զարձրին իրենց ազգային գիրը, վոր հետո գտնվեցավ Դանիէլի մոտ և կատարելագործվեցավ Մեսրոպի միջնորդութեամբ»։

Մ. Միսնասարյանն իր «Կանոնավոր և վայելուչ գրութեան պատմութեանն ու տեսութեանը» աշխատութեան մեջ հայտարարում է. «Հայկական տառերի ստեղծումը շատ և շատ հին է. գոնե Վաղարշակից առաջ (այսինքն՝ 150—200 թ.թ. մինչև մեր թվականութեանը)։ Ահա այս տառերն եր, վոր տեսել եր Վառնապուհ

հայոց թագավորը (400-ական թվականներին, մեր թվականութեան) Միջագետքում՝ Ասորի Դանիէլ յեպիսկոպոսի մոտ պահած իբրև հնութիւն և վորից այդ տառերն ստացավ Մեսրոպը»։

Ն. Տաղավարյանը «Ծագումն հայ տառից» (1895 թ. Վիեննա) գրքի մեջ գրում է. «Հայերը հնում իրենց հարևան սեմական և թուրանական ազգերի նման ունեցել են սեպագի նշանադրեր՝ փոփոխված ըստ իրենց լեզվի պահանջի և գրականութեան, վորի մնացորդները դեռ կան Հայաստանում, որ. Վանի ծովազերջա ապառաժների վրայի արձանագրութեանները։ Փյունիկյան տառերը, վոր իբր հնարված են քրիստոսից 10 դար առաջ, իրենց դյուրութեան պատճառով վանում են սեպագիրը և հաջորդում դրան։ Հայերը ուրիշ շատ ազգերի նման թողնում են իրենց սեպագիր գրերն և վրդենիկյան գրերով մշակում իրենց գրականութեանը, վորոշ փոփոխութեան յենթարկելով, ըստ իրենց լեզվի պահանջներին»։

Բանասերներից վոմանք (Վենետիկյան դպրոցից) ընդունում են, թե մեսրոպյան տառերից առաջ հայերն ունեյին գրավոր գրականութեան, գրում եյին պարսկերեն, հունարեն, ասորերեն տառերով, բայց իմաստը՝ հայերեն։

Այս բոլոր վկայութեանները, պատճառաբանութեանները և յեզրակացութեանները, պետք է ասել, վոր միակողմանի չեն, սխալ և մտացածին։

Ասորի Դանիէլ յեպիսկոպոսի մոտ յեղած 22 նշանները յիրեք չեն յեղել հայերեն և մինչ այդ չեն գործածվել նրանց մեջ։ Դրանք, շատ հավանական է, վոր ուրիշ վորեւէ արամեական (սեմական) լեզվի այբուբեն լինեյին, վորոնք գործածութեանից դուրս եյին ընկել և սխալմամբ համարվում եյին հայերեն, կամ ուղղակի Դանիէլը, վոր նստում եր Հայաստանի հարավում, ասորական նմանագրութեամբ կազմում է այդ 22 նշանագրերը։

Յեվ իսկապիս, փորձը ցույց տվեց, վոր այդ տառերը հայերեն չեյին, վոր դրանք չեյին համապատասխանում հայ լեզվի հնչյուններին, ձայնական որեւքներին։

Հավանաբար այդ բանասերները շփոթել են յերկու նմանահնչուն բառեր՝ արամեական (սեմական) և արմենական (հայկական)։

Այս բանն ապացուցում է հենց Կորյունի հետեյալ վկայու-

* Ազաթանգեղոս՝ Պատմութիւն. Հայոց, եջ 96։

թյունը. «Մեկ իբրև ի վերայ հասեալ թէ չեն բաւական նշանա-
գիրքն՝ ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզույն, մա-
նավանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց քաղեալք և
յարուցեալք դիպեցան»*, կամ Խորենացու խոսքերը՝ «Որոց ուսե-
ալ, և թեմանով ընդ նոսա տղայոց զամս սակաւս, տեղեկացեալ
զիտացին՝ ոչ լինել բաւական այնու նշանագրօք ստոյգ հոլովել
զհեգեանայ բառից հայկականաց հաղներգարար՝ մուրացածոյն և
այնուիկ զծագրութեամբ»**:

Այդ այբուբենը հալանորեն պիտի գրված լիներ աջից
ձախ՝ ըստ ասորական գրի: Մինչև մեսրոպյան կատարելագործված
այբուբենի ընդհանրապէս, հալանորեն, մի քանի տարիներ
Դանիելյան գրությունը պետք է ավանդված լիներ գոնե Դանիել
յեպիսկոպոսի գործունէութեան շրջանում՝ Հայաստանի հարավում:

Մեսրոպի խոշորագույն ջանքերի պատուը յեղել և Դանի-
ելյան այբուբենի նկատմամբ կատարած փոփոխութիւնները, Հոռ-
փանոսի աջակցութեամբ այդ այբուբենի լրացումը (ըստ Ստե-
փան Ասողիկի՝ Մեսրոպը նախամեսրոպյան 29 նշանագրերից
բազմացած այբուբենը լրացնում և հույն նշանագրերից առնված
7 ձայնավորներով, իսկ ըստ Վարդան պատմիչի և Մ. Նմինի՝
Մեսրոպը Դանիել ասորու մոտ գտնում և միայն 22 նշանագիր և
դրանց վրա իր կողմից ավելացնում 14 տառ ևս), կատարելա-
գործումը, դասավորումը և գրութեան ձախից աջ դարձնելը՝ ըստ
հունականի: Այսպիսով, Մեսրոպի յեռանդուն ջանքերով և գլխա-
վորութեամբ և միայն, վոր առաջին անգամ սկիզբ և առնում հայ
գրավոր գրականութեանը, 5-րդ դարից սկսած:

Այն բոլոր յենթադրութիւնները, թե 5-րդ դարից առաջ
հայերը գործ են ածել Դանիելյան նշանագրերը, իսկ հետո հու-
նարեն, ասորերեն, պարսկերեն տառերով, բայց հայերեն լեզվով
գրականութեան—անհիմն են և սխալ: Մինչև 5-րդ դարը հայե-
րը սեփական տառերով և վոչ ել հունարեն, պարսկերեն, ասո-
րերեն տառերով, բայց հայերեն լեզվով գրականութեան յերբեք
չեն ունեցել: Գոնե մինչև այժմ չի գտնված վորեւ մի փաստ,
վոր հաստատի այդ յենթադրութիւնները: Յեթե հայերը, իսկա-
պես, Մեսրոպից առաջ ունեցել են իրենց սեփական այբուբենը

և յերկար ժամանակ ոգտվել նրանից, ապա ինչպէս և պատահել,
վոր այդ գրականութեանը միանգամից, մի աներեւոյթ ձեռքով
այնպէս և ջնջվել, վերացել մեջտեղից, վոր նրանից մի նմուշ, մի
փոքրիկ արձանագրութեան անգամ չի մնացել: Կամ յեթե հայերը
գործ են ածել հունարեն, ասորերեն, պարսկերեն տառերով, բայց
հայերեն լեզվով գրականութեան—այդ դեպքում, ըստ մեր պատ-
միչների վկայութեան, ժամասացութեանը ինչպէս պիտի անհաս-
կանալի լիներ հայերին, կամ թե Մեսրոպը ինչպէս պիտի ստիպ-
ված լիներ այդքան տառապանքներ կրել հայերեն գիր ստեղծե-
լու, յերբ նրա տրամադրութեան տակ կար արդեն այդպիսին:

Այն, վոր հայերը Մեսրոպից առաջ գործ են ածել պարսկե-
րեն, հունարեն և ասորերեն լեզուներով գրել—հաստատում են
համարյա մեր բոլոր պատմիչները: Բայց այդ գրերը յեղել են
վոչ թե հայերեն լեզվով—հայերեն բառերով, այլ հենց պարսկե-
րեն, հունարեն, ասորերեն լեզուներով և գրերով:

Վոր հայերը մինչև 5-րդ դարը սեփական գիր չեն ունեցել
և գործ են ածել պարսկերեն և հունարեն գրերը, դրա լավագույն
վկայութեանը Մովսէս Խորենացին և, վորն իր Պատմութեան Գ
գլխում դատապարտում է հայ թագավորներին և իշխաններին
նրանց անխմտասիրութեան համար, ասելով. «Ապա ուրեմն
ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոցն առաջ-
նոցն առ ի յիմաստն աղամարութիւն, և անկատարութիւն ողւոյն
ընանականի: Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փո-
քու սահմանեալ, և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով ան-
գամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արու-
թեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի դրոց
յիշատակի, զորոց և ոչ մի ոք ի նոցանէ պէտք յանձին կալաւ
մատենագրել: Արդ այնոքիք, որք և ոչ անձանց խորհեցան բարի
առնել, և անուն յիշատակի յաշխարհի թողուլ, զի՞ արդեւք և մե-
ղադրութիւն մեր այնպիսեացն ի ճան պատահիցէ, զես մեծա-
դոյնս ի նոցանէ պահանջել և որ ինչ հնազոյն քան զնոսա:

Այլ ասիցէ ոք արդեւք. վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն
ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կուռ
զմիմեանց զինի անհետ ի վերայ գային:

Այլ ոչ արդարեւ այսոքիք կարծեցեալ լինի. քանզի գտանին

* Գ ո Ր Ի ւ ն — Պատմութիւն ..., եջ 13:

** Մովսէսի Խորենացոյ՝ Պատմութիւն Հայոց, եջ 334:

և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայագատութիւն: Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հինսն հայաստանեաց լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց: Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղազս անբանից արանց թուլամտաց վայրենեաց ճառել*:

(Ուրեմն մեզ ամենքին հայանի յեն մեր թագաւորներ ի և ուրիշ՝ առաջներում յեղածների անհոգութիւնը զխտութեան մասին և նրանց մտածողութեան անկատարելութիւնը, վորովհետեւ թեպետ մենք փոքր ազգ ենք, թվով շատ քիչ և զորութեամբ թույլ և շատ անգամ ենք նվաճվել ուրիշ թագաւորութիւնների կողմից, սակայն մեր աշխարհում ևս կատարվել են քաջութեան շատ գործեր, վորոնք արժանի են ինչ գրավոր հիշատակութեան, բայց մեր թագաւորներից վոչ մեկը հոգ չտարավ զբանք զրել տալու:

Ուստի արժանի չե՞ն արդոյք մեր պարսավանքներին այն մարդիկ, վորոնք չհոգացին վոչ բարիք անել իրենց և վոչ ել իրենց հիշատակը թողնել յերկրի մեջ: Յեւ կարող ենք արդոյք պահանջել նրանցից ավելի մեծագոյնն, այսինքն այն գործերի հիշատակը, վորոնք կատարվել են նրանցից ավելի հին ժամանակներում:

Բայց կարելի չե մեկն ասե. դուքն զրա պատճառը յեղել ե գրերի և գրականութեան պակասը, կամ զանազան պատերազմներ, վորոնք լինում են անդադար, մեկը մյուսի վրա: Բայց այդ կարծիքը ուղիղ չե, վորովհետեւ պատերազմների մեջ լինում են ին և զաղարներ, և կային պարսկական և հունական զրեր, վորով այժմ գտնվում են մեր մօտ գյուղերի, գավառների, նաև առանձին տների լոյր վեճերին և դաշնագրերին, և մանավանդ ցեղական ազնվականութեան ժառանգութեան վերաբերյալ անթիվ գրուցական մատյաններ: Բայց յես կարծում եմ, վոր հին ժամանակներում, ինչպես և այժմ, հայերը գիտութեան և բերանացի յերգարանները չեն սիրել: Ուստի ավելորդ ե այլևս խոսել անբան, թուլամիտ և վայրենի մարդկանց մասին):

* Մովսէսի Խորենացւոյ՝ Պատմութիւն Հայոց, էջ 12—13:

Մի այլ տեղ խոսելով Մերուժանի զործած չարիքների և հայոց Պապ թագաւորի թագաւորութեան մասին, ասում ե. «Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, և հրաման տայր մի ուսանել զգալութիւն յունարէն, այլ պարսիկ. և մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենին մի լիցի Հայոց ընդ Յունաց. ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ. այլ ճշմարիտ՝ խափանել զբրիտանիւնութեան ուսումն: Զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չե ևս էր լեալ, և յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգը*:

Խոսելով զանիելյան նշանագրերի մասին, Խորենացին ասում ե. «Եւ իջեալ նորա և կարգեալ զայս ամենայն, ոչ փոքր ինչ կրէ աշխատութիւն յաղազս քարտուղարի. զի մինչև գնաց Մեսրոպ յարքունական զբանէն՝ ոչ զոք ի ճարտարաց գտանէր անդ ի գպրոց, քանզի պարսկականաւն վարէին գրով**:

Կիրակոս Գանձակեցին այդ առթիւ գրում ե. «Եւ ի ժամանակս սորա [Վրամշապուհի մասին ե խոսքը] ծագեաց լոյս մեծ զխտութեան յաշխարհիս Հայոց. քանզի երանելին Մեսրոպ եկեալ առ սուրբն Սահակ, եթէ հնար ինչ իցէ ստեղծանել նշանագիր հայերէն լեզուի. և եգիտ գնա առաւել ևս այն փափաքող. Բանգի ցայն վայր ո՛չ ունէին գիր հայերէն, այլ Յոյն և Ասորի գրով և նշանագրով վարէին***: Դադար Փարպեցին խոսելով Վրամշապուհի թագաւորութեան և Մեսրոպ Մաշտոցի մասին, գրում ե. «...վասնզի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի գպիրքն, զվճուցն և զհրովարտականցն****:

Պատմիչների բերած այս վկայութիւններն ակնհայտ կերպով հաստատում են, վոր հայերը մինչև 5-րդ դարը սեփական զիր չեն ունեցել և գործ են անել միայն ասորոց և հունաց զրերը:

Այժմ մեր գործածած տառային այբուբենը կոչվում ե Մեսրոպյան այբուբեն՝ ի տարբերութիւն զանիելյան այբուբենի: Մեսրոպյան այբուբենի տառերը մինչև այսօրվա իրենց վիճակին

* Մովսէսի Խորենացւոյ՝ Պատմութիւն Հայոց, էջ 303:

** Նույն տեղ, էջ 333:

*** Պատմութիւն Հայոց արաբեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ,

էջ 28—29:

**** Դադարայ Փարպեցւոյ՝ Պատմութիւն Հայոց, էջ 27:

հասնելը դարերի ընթացքում յենթարկվել են զգալի ձևափոխութեան:

Այդ այբուբենը բաղկացած է հետևյալ 36 տառերից.

Ա—այր—(առաջին նշանագիրը, ձայնավոր, նշանանակում է մեկ և կամ առաջին):

Բ—բեն—(բաղաձայն, նշանակում է յերկու կամ յերկրորդ):

Գ—գիմ—(բաղաձայն,—յերեք կամ յերրորդ):

Դ—դա—(բաղաձայն,—չորս կամ չորրորդ), զործ է անվում վորպես հոդ:

Ե—եչ—(ձայնավոր,—հինգ կամ հինգերորդ):

Զ—զա—(բաղաձայն,—վեց կամ վեցերորդ):

Է—է—(ձայնավոր,—յոթ կամ յոթերորդ):

Ը—ըթ—(ձայնավոր,—ութ կամ ութերորդ):

Թ—թո—(բաղաձայն,—ինը կամ իններորդ):

Ժ—ժէ—(բաղաձայն,—տաս կամ տասերորդ):

Ի—ին—(ձայնավոր,—քսան կամ քսաներորդ):

Լ—լիւն—(բաղաձայն,—յերեսուն կամ յերեսուներորդ):

Խ—խե—(բաղաձայն,—քառասուն կամ քառասուներորդ):

Ս—ծա—(բաղաձայն,—հիսուն կամ հիսուներորդ):

Կ—կեն—(բաղաձայն,—վաթսուն կամ վաթսուներորդ):

Հ—հո—(բաղաձայն,—յոթանասուն կամ յոթանասուներ.):

Ձ—ձա—(բաղաձայն,—ութսուն կամ ութսուներորդ):

Ղ—ղատ—(բաղաձայն,—իննսուն կամ իննսուներորդ):

Ճ—ճե—(բաղաձայն,—հարյուր կամ հարյուրերորդ):

Մ—մեն—(բաղաձայն,—յերկու հարյուր):

Յ—յի—(ձայնորդ,—յերեք հարյուր):

Ն—նու—(բաղաձայն, հոդ,—չորս հարյուր):

Շ—շա—(բաղաձայն,—հինգ հարյուր):

Ո—ուռ—(ձայնավոր,—վեց հարյուր):

Չ—չա—(բաղաձայն, բացասական ածանց,—յոթ հարյուր):

Պ—պի—(բաղաձայն,—ութ հարյուր):

Ջ—ջե—(բաղաձայն,—ինն հարյուր):

Ռ—ռա—(բաղաձայն,—հազար):

Ս—սէ—(բաղաձայն, հոդ,—յերկու հազար):

Վ—վե—(բաղաձայն,—յերեք հազար):

Տ—տիւն—(բաղաձայն,—չորս հազար):

Բ—բէ—(բաղաձայն,—հինգ հազար):

Ց—ցո—(բաղաձայն,—վեց հազար, նախդիր):

Ի—հիւն—(ձայնավոր,—յոթ հազար):

Փ—փիւր—(բաղաձայն,—ութ հազար):

Ք—քե—(բաղաձայն, վերջին տառ մեարդայան այբուբենի,—ինն հազար):

Մեարդայան այբուբենի սկզբնական ձևակերպությունը, վոր գործածութեան մեջ է յեղել մոտավորապես մինչև 9-րդ դարը, կոչվում է յերկաթագիր:

Գրի «յերկաթագիր» կոչվելու պատճառը ըստ վոմանց այն է, վոր այն ժամանակներում մարդիկ գրում էին մագաղաթի վրա յերկաթե գրչով. ըստ ուրիշների՝ «յերկաթագիր» է կոչվել այն պատճառով, վոր գրելու համար գործ էյին անում յերկաթի ժանգից պատրաստած թանաքը:

Միջին յերկաթագիր. 9-րդ դարից սկսած գրելը հեշտացնելու համար յերկաթագիր տառերը մի փոքր կարճացնում են՝ տառերի վերին և ստորին ծայրերից մի քիչ կտրելով և ուղղելով: Այդպիսով տառերը փոքրանում, ուղղաձիգ և լայն ձև են ստանում. ստացվում է միջին յերկաթագիր կոչվածը, վորի մի տեսակն է փոքր յերկաթագիրը, վորը սկսում է մինչև 12-րդ դարը, իսկ յերկաթագիր տառերը գործ էյին անվում իբրև սկզբնատառեր կամ զլխատառեր:

Բոլորգիր. 12-րդ դարում այդ միջին յերկաթագրի տառերն ավելի ևս կարճանալով՝ ընդունում են այն ձևը, վորն այսօր առհասարակ գործածական է տպագրութեան մեջ և կոչվում է բոլորգիր: 12-րդ դարում մեարդայան այբուբենին ավելանում են յերկու տառ ևս—«Օ» և «Ֆ», վորով և մեր այբուբենը դարձավ 38 տառից: «Օ» ձայնավորն անցել է մեզ միջնադարյան լատիներենից: Դրաբարի մեջ չկա. այս տառի փոխարեն առաջ գրում էյին «աւ». որինակ՝ հօր, մօր, օր, օձ և այլն գրելու փոխարեն գրում էյին՝ հաւր, մաւր, աւր, աւձ և այլն:

«Ֆ» տառը նույնպես փոխառություն է միջնադարյան լատիներենից. գրաբարի մեջ չկա, կա միայն աշխարհաբարում:

Նոսր գիր. բոլորգրին զուգընթաց, արագ գրելու կարիքը առիթ է տալիս այդ տառերի առավել ևս պարզեցմանը, վորով առաջանում են մեր այսօրվա հասարակ և պարզ գրերը: Գրերի

ՈՐԻՆԱԿՆԵՐ ՀԱՅ ՀՆԱԳՈՒՅՆ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ ՅԵՎ ԱՐՁԱՆԱ-
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ


(Վերվցած են Կ. Ղափաղարյանի «Հայկական գրի սկզբնական տեսակները» գրքից)



Բոլորածև յերկաթագիր.

գյուտից հետո հայ գրականությունն սկսում է արագ կերպով զարգանալ: Այդ գրականությունն սկզբում կրում էր զերազանցապես թարգմանչական բնույթ: Հայ թարգմանիչներն այդ ասպարեզում կատարել են անգնահատելի աշխատանք՝ հունարեն, ասորերեն և պարսկերեն աղբյուրներից թարգմանելով բազմապիսի աշխատություններ:

Այդ գրականությունն սկզբնական շրջանում ուներ զլիափորապես կրոնական-վերացական բնույթ. դա կաղմում էր շատ սահմանափակ շրջանի՝ ֆեոդալների և հոգևոր դասի սեփականու-



Բոլորածև յերկաթագիր.

թյուն: Աշխատավոր ժողովուրդը չէր վայելում դրա բարերար ազդեցությունը:

Հայտնի չէ, վոր մինչև 14—15-րդ դարերը ձեռագրերը գրվում էին մագաղաթի վրա, վորի գործածությունը ծանոթ էր մարդկությանը զեռ շատ առաջ:

Մագաղաթը զլիափորապես պատրաստում էին հորթի, գառան և այծի մորթուց: Մեզ հասած մագաղաթյա ձեռագրերը յերեք դույնի յեն՝ դեղնադույն, սպիտակ և ծիրանի, վերջինիս վրա յեն գրված բոլոր սուրբ գրքերը գրեթե բոլոր քրիստոնյա ազ-



5. ՅՈՂԱՆ ԳՈՒՅՏԵՆԲԵՐԳ

Տպագրության—մարդկային մտքի զարգացման ու ծավալման այդ խոշորագույն գյուտի պատիվը պատկանում է Գերմանիայի Մայնց քաղաքի բնակիչ Յոհան Գուտտենբերգին:

Տպագրության արհեստն անցյալում անծանոթ է յեղել մարդկությանը:

Չնայած գրատպության արհեստն անցյալում ծանոթ էր մարդկանց, սակայն դեռևս շատ վաղուց նրանք գիտեցին զրա սկզբունքը: Մարդիկ առաջներում գիտեցին քարի, մետաղի, անոթի և այլ իրերի վրա բարձրաքանդակ և խորաքանդակ փորագրություններ անել, նրանք հասցրին դրոճ էլին ածում էր տպագրությունը:

Զինաստանում մեր թվականության VI դարում հայտնի էր գրքերի տպագրությունը փայտե տախտակների միջոցով:

Յոհան Գուտտենբերգն էր, վոր առաջին անգամ գտավ, սկզբում փայտյա, իսկ հետո արձիճից ձուլված շարժական տառերի շարվածքի ոգնությունը, առանց մեծ ծախսի, շատ արագ կերպով բազմացնելու-տպելու յեղանակը:

Յ. Գուտտենբերգը ծնվել է Գերմանիայի Մայնց քաղաքում 1396 — 1400 թ. թ. սահմաններում (ծննդյան ստույգ թիվը հայտնի չէ, վրմանք ընդունում են 1396 թիվը, վրմանք՝ 1397, ուրիշները պայմանական կերպով ընդունում են 1400 թվականը):

Նրա մանկության և պատանեկության մասին ես վրոշ բան հայտնի չէ: 15 տարեկան էր Գուտտենբերգը, յերբ մեռավ նրա հայրը: 1420 թվին Գուտտենբերգը, վրոշ հանգամանքներից հարկադրված, հեռանում է իր ծննդավայրից և հաստատվելով Ստրասբուրգում՝ աշխատում է գտնել ձեռագրեր բազմացնելու արհեստը: Այդ ասպարեզում նա համոզվում է խոշոր արդյունքների: Սակայն իր այդ նախագծերն իրագործելու համար անհրաժեշտ էր ունենալ դրամական խոշոր միջոց, վորպիսին նա չուներ, իր տրամադրության տակ յեղած դրամը նա արդեն ծախսել էր բազմաթիվ հետազոտությունների վրա: Այդ համարձակ ձեռնարկությունը կարիք էր զգում խոշոր ոժանդակության: Գուտտենբերգը կարիք էր զգում ոգնականների: Շուտով կազմվում է մի ընկերություն:

Առաջին մարդը, վորը մինչև իր կյանքի վերջը հավատարիմ է մնում Գուտտենբերգին, դառնում նրա խիղախ ձեռնարկումների գործունյա մասնակիցը և իրեն հասանելիք հայրական ամբողջ ժառանգությունը դնում է այդ գաղտնի գործի ոգտին— դա Անդրեյ Դրիտցենն էր: Այնուհետև Գուտտենբերգը այդ ընկերության անդամ է ընդունում հարեան քաղաքի բուրգումիստր Լիխտենաու շանս Սիֆին և Ստրասբուրգի նշանավոր քաղաքացի Անդրեյ Հեյլմանին: Ահա այդ յերեք ոգնականները՝ Անդրեյ Դրիտցենը, շանս Սիֆը և Հեյլմանը բավական խոշոր գումարով ոժանդակում են Գուտտենբերգին այդ գաղտնի գործի շարունակման համար, իբր թե հայելի շինելու նպատակով:

Սակայն այդ հանդուգն ձեռնարկությունը անհաջողության է հանդիպում. յեղած դրամը նորից չի բավականացնում, այդ գործի համար արած բոլոր զոհողությունները մնում են ապարդյուն: Այդ ձախողություններին ավելանում է մի վերջին հարված ես—ընկերներից՝ Անդրեյ Դրիտցենը, այդ ձեռնարկության

խանդավառ և գործունյա անդամը, 1439 թվին ծանր հիվանդա-
նում է և մահվան ընթացին խոստովանում յուր մասնակցությունը
Գուտտենբերգի ձեռնարկած գործին ու այդ գործի համար հատկաց-
րած դրամի մասին:

Այդ ժամանակ արդեն Գուտտենբերգին հաջողվել էր պատ-
րաստել տպագրական մամուլ—մետաղյա շարժուն տառեր, մնում
էր միայն գտնել մի այնպիսի նյութ, վորով հնարավոր լիներ դա-
նազան մետաղների խառնուրդով պատրաստել պահանջված կարծ-
րության տառեր, բաղմացնել դրանք և ոգտագործել իր նպա-
տակին:


Դրիտցենի մահով այդ գործը մնում է թերի, ընկերությունը
քայքայվում է:

Պարտատերերից հալածված՝ Յոհան Գուտտենբերգը 1444—45
թվին վերադառնում է իր ծննդավայրը—Մայնց և աշխատում է
այստեղ ավարակ իր սկսած գործը:

Գուտտենբերգը հնարում է նաև առաջին փայտյա տպագրա-
կան դադգյահը:

Առաջին անհաջող գործերը, վորպիսիք դուրս են գալիս նրա
տպագրական մամուլի տակից, թեև սպառում են առանց այն էլ
նրա սուղ զբաղման միջոցները, սակայն դրանք ավելի թեա-
վորում են Գուտտենբերգին, վորը, վորեշնչված այդ հաջողու-
թյունից, ծրագրում է սկսել մի խոշոր գործ—աստվածաշնչի
տպագրությունը: Յեվ վորովհետև այդ գործի համար նա չունի
զբաղման անհրաժեշտ միջոցներ, ուստի կազմում է մի նոր ըն-
կերություն—Մայնցյան հարուստ բյուրգեր—ճարպիկ վոսկերիչ՝
Յոհան Ֆուստի և յերիտասարդ գրագիր—ճարտար ընդորինակող
Պետեր Շեֆերի հետ, վորին Ֆուստը հետագայում իրեն փեսա յե
դարձնում: Այդ նոր ընկերության գործունեությունը շարունակ-
վում է մոտ 5 տարի, վորի ընթացքում լույս են ընծայում ե.
Դոնատի լատինական քերականությունը, պապական ինդուլգեն-
ցիաներ (մեղքերը ներելու պապական կոնդակ) և մի զբոսայի:

Աստվածաշնչի տպագրության համար Յոհան Ֆուստը՝ իր
և Գուտտենբերգի միջև կնքված պայմանագրի համաձայն, Գուտ-
տենբերգին տոկոսով է տալիս յերկու անգամ 800-ական գուլդեն
(դրամ) 6%-ով, վորը բավական խոշոր գումար էր, և յուրաքան-
չյուր տարի 300-ական գուլդեն՝ գործը վարելու համար: Այսպի-



Գուտտենբերգի հնարած տպագրական դադգյահը.

սով, այդ ճարպիկ վաշխառուն հաջողվում է իր ցանցը գցել Գուտ-
տենբերգին, խճճում նրան իր տված պարտքերի մեջ, հինգ տա-
րուց հետո ներկայացնում նրան մի խոշոր գումարի հայց (2020
գուլդեն) և դատարանի միջոցով, վորովհետև Գուտտենբերգն ի
վիճակի չէր յերբեք վճարելու այդ գումարը, խլում է նրա ձեռ-
քից ձուլարանը, մամուլն ու տպարանը:

Մինչ այդ տպագրված գրքերում Յոհան Գուտտենբերգը դա-

նազան պատճառներից դրդված չէր հիշատակել իր անունը, ուստի և տպագրության գլուտի այդ մեծ հեղինակի անունն անհայտ էր մնացել մարդկանց: Այնուհետև, յերբ Յոհան Ֆոլեստը խլում է Գուտտենբերգի ձեռքից նրա տպարանը, նոր արհեստը յեռանդուն կերպով շարունակելու համար իրեն ընկեր է դարձնում Պետեր Շեֆերին, վորն արդեն ընդորինակել ևր տպագրության բոլոր զաղանիքները, և նրա հետ միասին սկսում են տպագրել զանազան գրքեր ու ձեռագրերի զնով վաճառել գնորդներին:

Այդ տպագրված գրքերի վրա, գլուտարարի մահից հետո, յերևան են գալիս նախ Ֆոլեստի, իսկ հետո և Շեֆերի անունները վորպես տպագրության գլուտարարների:

Տպագրության հայր Յոհան Գուտտենբերգին զժվար ևր մրցել հարուստ Ֆոլեստի հետ և նա հուսահատված ու թշվառության մատնված՝ հեռանում է իր հայրենի քաղաքից՝ Մալնցից: Թե ինչպես են անցնում այդ մեծ մարդու կյանքի վերջին տարիները— հայտնի չեն: 1465 թվի հունվարի 18-ին գեկրետով Մալնցի տիրական և փառասեր դուքսը հանդես է գալիս գլուտարարի հովանավորի դերում, հատկացնելով նրան աննախանձելի թոշակ, վորը, իհարկե, չէր կարող ապահովել Գուտտենբերգի կյանքը:

1468 թ. փետրվարի 15-ին Մալնցում մեռավ Գուտտենբերգը:

Ֆոլեստի մահից հետո նրա տպարանն անցնում է իր փեսայի՝ Շեֆերի ձեռքը, վորը նույն յեղանակով շարունակում է ոգտագործել տպագրության արհեստը: Միայն վերջինիս վորդի Յոհան Շեֆերն է, վորը հարգում է տպագրության հեղինակի հիշատակը՝ հայտարարելով, թե Գուտտենբերգին է պատկանում այդ նոր արվեստի առաջին փառքը:

Մալնցի ս. Վիկտոր յեկեղեցու կանոնիկոս (կաթոլիկների մայր տաճարի քահանա) Իվո Վիտիգի՝ Լիվիուի թարգմանության մեջ, Մաքսիմիլիան թագավորին նվիրված ձոնում, ասված է հետևյալը. «Մալնցի մեջ է առաջին անգամ հնարված տպագրության հրաշալի արվեստը—1450 թվին, հանձարեղ Յոհան Գուտտենբերգի կողմից, վոր բարեկամված ու տարածված է իր հաջորդների՝ Ֆոլեստի և Շեֆերի շնորհիվ»:

Տպագրության արվեստը Գուտտենբերգի աշակերտների միջոցով արագ կերպով տարածվում է ամեն կողմ: Այդ աշակերտներից վոմանք դեռևս Գուտտենբերգի կենդանության ժամանակ տպարան-

ներ են հիմնում Գերմանիայի զանազան քաղաքներում և նույնիսկ ոտար յերկրներում: 1465 թվից սկսած Ֆոլեստ-Շեֆերի տպարանի 3 աշխատակիցներ թողնելով այդ արհեստանոցը, անցնում են Իտալիա և Հռոմի մոտ գտնված մի վանքում հիմնում իրենց տպարանը: Դրանցից Հուն Ուլրիխը Հռոմի կարդինալի կողմից (կարդինալ-ծիրանավոր՝ կաթոլիկ բարձրաստիճան հոգևորական) կանչվում է Հռոմ և 1467 թվին հրատարակում նրա «Սորհրդածոթյուններ»-ը:

Այնուհետև տպագրություն է հիմնվում Վենետիկում—1469 թվին, այստեղից այդ արհեստը նույն թվականին անցնում է Ֆրանսիա, նախ՝ Սորբոն, ապա Պարիզ և մյուս քաղաքները:

Տպարաններ են հիմնվում Անգլիայում 1474 թվից սկսած, Վենդրիայում (Բուդապեշտ)՝ 1473, Ալստրիայում (Վիննա)՝ 1482, Փորթուգալիայում (Լիսաբոն)՝ 1489, Նախկին Լեհաստանում (Կրակով)՝ 1491, Դանիայում (Կոպենհագեն)՝ 1493, Իսպանիայում (Մադրիդ)՝ 1499, Հոլանդիայում (Ամստերդամ)՝ 1523, Շվեյցարիայում (Բեռն)՝ 1539, Ռուսաստանում (Մոսկվա)՝ 1564, Մեքսիկայում (Ամերիկա)՝ 1566, Զինաստանում (Պեկին)՝ 1603, Կանտոն—1671, Ամերիկայում (Ֆիլադելֆիա)՝ 1686, Նյու-Յորք՝ 1693 թվին: Այսպիսով, տպագրությունը հետզհետե մուտք է գործում զանազան յերկրներ և ուժեղ կերպով նպաստում կուլտուրայի զարգացմանը, գիտության ու արվեստի ծաղկման ու բարգավաճման մեծ գործին:

6. ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՄԵՋ

Հայերեն առաջին տպագրությունը տեղի յե ունեցել Իտալիայի Վենետիկ քաղաքում, վորը միջին դարերում Արևելքի և Արևմուտքի համար հանդիսանում էր մի վաճառաշահ քաղաք:

Ռուբինյան իշխանության որով Կիլիկիայի հայերը առևտրական սերտ հարաբերություններ ունեյին Վենետիկի հետ: Այնտեղ դեռ շատ վաղուց գոյություն ունեւր առևտրով զբաղվող սակավաթիվ մի հայ գաղութ և «Հայոց տուն» անունով մի շինություն՝ հայ պանդուխտների համար: Ահա այդ գաղութի հայերից մեկը՝ Հակոբ անունով, առաջին անգամ հիմք է դնում հայ տպագրության, հետևելով վենետիկցիների որինակին և

1512—1513 թվերին այդ քաղաքի մեջ լույս է ընծայում 5 հատ հայերեն գիրք, վորոնք և հանդիսանում են հայ տպագրության առաջին փորձերը: Այդ գրքերն են՝ 1512 թվին—«Պարգատումար» (առանց հիշատակարանի) և 1513 թվին—«Պատարագատետր», «Ուրբաքագիրք», «Տաղարան» և «Աղթարք»: «Պարգատումարը» փոքր, ընդամենը 59 թերթից կազմված գիրք է, թերթերն այբուբենով թվարկված. տպագրությունը ծայրից ծայր կատարված և միտքինակ գրով՝ առանց սև և կարմիր գույնի:

«Պատարագատետրը» կազմված է 44 թերթից, մի քանի պատկերներով, գրված խոշոր տառերով. «Ուրբաքագիրքը» բաժանված է յերկու մասի՝ բաղկացած ընդամենը 24 թերթից—բովանդակությամբ շատ վտոյրմեղի, պարունակում է զանազան աղթքներ:

Այնլի արժեքավորը գրանցից «Տաղարանն» է, վորը պարունակում է իր մեջ աշուղական զանազան բանաստեղծություններ՝ Հով. Թլկուբանցու, Նազաշի, Ֆրիկի և ուրիշների: «Աղթարք»-ը բաղկացած է 24 ութածալ թերթից՝ այբուբենով թվարկված, բովանդակությամբ շատ աղքատ, պարունակում է զանազան սնոտիապաշտական սովորություններ, գուշակություններ, տարեցույց, ամսացույց, յերազանհան և այլն:

Այնուհետև հայերեն տպագրության սկզբնավորությանը հաջորդում է մի յերկարատև դադար: 1565 թվին, առաջին հայ տպագրությունից 52 տարի հետո, նույն քաղաքում Արզար Դպիրը տպում է հայոց առաջին որացույցը և մի Սաղմոսարան: Այստեղից հայերեն տպագրությունը տարածվում է Իտալիայի մյուս քաղաքները և ուրիշ յերկրներ: Անցյալում հայերեն տպագրությունն առանձնապես մեծ զարկ է ստանում Մխիթարյան միաբանության տպարանում (Վենետիկում, ս. Ղազարի վանքում):

Այդ տպարանում են տպվել հազարավոր արժեքավոր աշխատություններ, վորոնցից արժե հիշատակել հետևյալները. Եղանակ Բիւզանդեան, Դիտակ Բիւզանդեան, Բազմավէպ, Այրարատ, Աշխարհագրութիւն Մ. Խորենացու, Բնաշխարհիկ բառարան, Բառագիրք, Բառգիրք արուեստից և գիտութեանց, Բեւեռագիր արձանագրութիւնք, Բժշկ. բառագիրք, Ենէական, Հայապատում, Նուագք, Փաւստոս Բիւզանդ, Քերականութիւն (Բագրատունու), Քրոնիկոն և այլն:

Թյուրքիայում հայերեն տպագրությունն սկսվում է 1567 թվից և մինչև 1569 թվը լույս են տեսնում հետևյալ 5 գրքերը՝ 1567 թվին՝ Փոքր Քերականություն կամ Այբբենարան, 1568-ին՝ Պարգատումար, Ժամգիրք և Պատարագամատոյց, 1569-ին՝ Մաշտոց: Լեհաստանում հայերեն տպագրությունն սկսվում է 1616 թվից: Այստեղից վոմն երեց Հովհ. Քարմատանենց նույն տարում տպագրում է 2 գիրք—Սաղմոսարան և Բժշկարան:

Հայկական տպարաններ են հիմնվում Ֆրանսիայում—1633 թվից (Բառագիրք հայոց, 1819-ին Փորձառութիւն հայկ. լեզուի, 1857-ին՝ Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ և այլն), Պարսկաստանում՝ 1640 թվից (Նոր Զուղայում—Հարանց վարք, Պատմութիւն Նոր Զուղայուն և այլ գրքեր), Հոլանդիայում—1660-ից (Քերականութիւն, Մաշտոց, Խորենացու Աշխարհագրութիւնը, Աղուեսագիրքը, Տոմարագիրք և ուրիշներ), Գերմանիայում—1680 թվից, Անգլիայում 1736 թվից, Հնդկաստանում՝ 1772-ից (Մաղբասում—Այբբենարան, Որոգայթ փառաց, Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց և ուրիշներ), Ռուսաստանում—1771 թվից (Եջմիածնում—Տաղարան, Դաւիթ բէգ, Մաշտոց, Դատաստանագիրք (Մխիթար Գոշի), Սիրոյ և վշտի երգիչը, Արարատ, Աւետարան-համաբարբառ և այլն: Տպարաններ են բացվում շատ քաղաքներում—Պետերբուրգում (Լենինգրադ), Նոր Նախիջևանում, Աստրախանում, Մոսկվայում, Թբիլիսիում, Շուշում, Ռոստովում, Բագվում, Յերևանում և այլ վայրերում:

Տպարաններ են բացվում Ամերիկայի մի քանի քաղաքներում՝ 1857 թվից սկսած, և ուրիշ յերկրներում:

ՈՐՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Марр, Н. Я., Язык и мышление.
2. „ Язык и письмо.
3. Вандрейс—Язык.
4. Шницлер—Иллюстрированная всеобщая история письмен.
5. Պր. Մարկուսարտ — Պատմութիւն հայերէն նշանագրութեան և վարուց
Մաշտոցի.
6. Հ. Տաշեան—Ուսումն դասական հայերէն լեզուի:
7. Պր. Պետերսեն—Նպաստ մը հայ լեզուի պատմութեան:
8. Պրոֆ. Գ. Ղափանցյան—Ընդհանուր լեզվաբանություն:
9. Ար. Ղարիբջան—Ներածություն հայոց լեզվի պատմության:
10. Պոդ. Հովնանյան—Մարդկային լեզու:
11. Իլին—Սեռվ սպիտակի վրա:
12. Միանոսարջան—Կանոնավոր ու վայելուչ գրության պատմությունը:
13. Ար. Վարդանյան—Հայ գրչագիրները ինչ պայմաններու տակ կրնա-
րինակելին հայ ձեռագրերը:
14. Ն. Տաղավարյան—Ծագումն հայ տառից:
15. Իս. Հարությունյան—Հայոց գիր:
16. Վ. Պրոսկուրյակով—Գուտտենբերգ (հայ. թարգմ.):
17. Կորիւն—Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի:
18. Մ. Խորենացի—Պատմութիւն հայոց:
19. Ղ. Փարպեցի—Պատմութիւն Հայոց:
20. Կ. Գանձակեցի—Պատմութիւն Հայոց:
21. Վարդան պատմիչ—Պատմութիւն Հայոց:
22. Շողակաթ:
23. Տիպ ու տառ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ֆերիու խոսք	5
История письма	7
Ընթերցողներին	9
Գրի առաջացումն ու նշանակութիւնը	11
Գրի զարգացման աստիճանները՝ ա. հիշողության ոգնականներ (առարկա-գիր, հանգուցազիր), բ. Պատկերազիր (Չինացիների գիրը, յեզիպտական հիերոգլիֆներ, սեպագրեր)	13
Հնչյունական այբուրենի մասին	38
Հայերեն տառերի մասին	61
Յոհան Գուտտենբերգ	84
Տպագրության տարածումը հայերի մեջ	89
Ոգտագործած գրականութիւն	93

Ц. 1940 г
 Акт № 247
 Вкладн. л.

Գատ. խմբագիր՝ Մ. Տ ե բ - Ղ ա գ ա ղ յ ա ն
Տեխ. խմբագիր՝ Վ. Մ ա ն ու լ յ ա ն
Սրբագրիչ՝ Մ. Չ ա ա ի լ յ ա ն
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ռ. Տ ո ն յ ա ն

Հանձնված և արտադրության 14/II 1940 թ.

Ստորագրված և տպագրության 25/III 1940 թ.

Գլավլիտի լիազոր ն—1079, հրատ. № 59, պատվեր № 44, տիրած 2000

ԱրմՖԱն-ի տպարան, Յերեվան, Լենինի վ. № 67.

ՀՀ Ազգային գրադարան



NL0122689

12384

ԳԻՆԸ 3, ՌՈՒԲԼԻ

	Арм.
	3-3954a.